

Դատական գործ N: ԵԿԴ/0090/01/09

| | | | |
|--|---|-------------------------|-------------|
| Երբ է գործը ստացվել: | 25-05-2009 | | |
| Քրեական գործի համարը: | 0090/01/09 | | |
| Ինչ կարգով է գործը ստացվել: | Առաջին անգամ | | |
| Գործը որտեղից է ստացվել: | | | |
| Դատախազություն: | << Գլխավոր դատախազություն | | |
| Նախաքննական գործի համարը: | 58201209 | | |
| Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն: | Մեղադրվում է այն բանի համար, որ հանդիսանալով էլ թի էլ մոբայլ ՍՊԸ-ի միակ հիմնադիր կազմակերպության կողմից վարձակալված վաճառարահում իրացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր, միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրացնելու համար | | |
| Մեղադրյալ Անձ | | | |
| | Անուն | Արսեն | |
| | Ազգանուն | Սարգսյան | |
| | Հայրանուն | Հայկի | |
| | Հասցե | Շերամի փող. 77շ. բն. 41 | |
| Հոդված_1 | | | |
| | Հոդված | 177 | Մաս 3 Կետ 1 |
| Հոդված_1 | | | |
| | Հոդված | 190 | Մաս 3 Կետ 1 |
| Դատվածություն: | | | |
| Պաշտպան | | | |
| | Անուն | | |
| | Ազգանուն | | |
| | Հասցե | | |
| Վիճակագրական տողի համարը: | 6.3 | | |
| Իրեղեն ապացույց | | | |
| Իրեղեն ապացույցի անվանումը: | | | |
| Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը: | | | |
| Խախտման միջոց: | Կալանավորում | | |
| Երբ: 25-05-2009 | | | |
| Նախագահող դատավոր | | | |
| Դատարանի անվանում: | Կենտրոն և Նորք-Մարաշ | | |
| Դատավորի անուն: | Գագիկ Կոլյայի Պողոսյան | | |
| Դատավոր | | | |
| Դատարանի անվանում: | Կենտրոն և Նորք-Մարաշ | | |
| Դատավորի անուն: | | | |

| | |
|-----------------------------------|--------------------------|
| Երբ: | 26-05-2009 |
| Որոշումը ուղարկվել է կողմերին: | 26-05-2009 |
| Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը: | 26-05-2009 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 19-06-2009 |
| Երբ: | 03-07-2009 |
| Երբ: | 13-07-2009 |
| Դատավարության կողմեր: | Տուժող |
| Դատավարության կողմեր: | Մեղադրյալ |
| Դատավարության կողմեր | |
| Անուն | ԱՐՄԱՆ |
| Ազգանուն | ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ |
| Հասցե | ԵՐԵՎԱՆ, ԹՈՒՄԱՆՅԱՆ 17 |
| Դատավարության կողմեր | |
| Անուն | ԱՐՄԵՆ |
| Ազգանուն | ՍԱՐԳՍՅԱՆ |
| Հասցե | ՀՀ ԱՆ ՀՆՈՒԲԱՐԱՇԵՆՆ > ՔԿՀ |
| Այլ նշումներ: | |
| Ժամ: | |
| Դատավարության կողմեր | |
| Անուն: | |
| Հասցե: | |
| Երբ: | 23-07-2009 |
| Ժամ: | 12 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 30-07-2009 |
| Ժամ: | 17 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 18-08-2009 |
| Ժամ: | 13 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 25-08-2009 |
| Ժամ: | 12 |

| | |
|-------------------------|------------|
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 03-09-2009 |
| Ժամ: | 12 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 11-09-2009 |
| Ժամ: | 12 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 22-09-2009 |
| Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 09-10-2009 |
| Ժամ: | 13:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 19-10-2009 |
| Ժամ: | 16:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 28-10-2009 |
| Ժամ: | 16:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 09-11-2009 |
| Ժամ: | 15:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 19-11-2009 |
| Ժամ: | 14:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |

| | | |
|-------------------------|------|------------|
| | Երբ: | 30-11-2009 |
| | Ժամ: | 16:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 11-12-2009 |
| | Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 17-12-2009 |
| | Ժամ: | 16:30 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 24-12-2009 |
| | Ժամ: | 16:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 19-01-2010 |
| | Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 02-02-2010 |
| | Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 12-02-2010 |
| | Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |
| | Երբ: | 25-02-2010 |
| | Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | | 1 |
| Այլ նշումներ: | | |

| | |
|--|------------|
| Երբ: | 11-03-2010 |
| Ժամ: | 14:30 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 19-03-2010 |
| Ժամ: | 16:30 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 23-03-2010 |
| Ժամ: | 16:30 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 06-04-2010 |
| Ժամ: | 16:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 14-04-2010 |
| Ժամ: | 12:00 |
| Նիստերի դահլիճի համարը: | 1 |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 14-04-2010 |
| Այլ նշումներ: | |
| Մեղադրյալ | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Ամսաթիվ: | 14-04-2010 |
| Առավել ծանր հանցագործության հողված | |
| Հողված | |
| Առավել ծանր հանցագործության հողվածով: | |
| Այլ հանցագործության հողվածներ | |
| Հողված | |
| Այլ հանցագործության հողվածներով: | |
| Հիմնական պատիժ: | |
| Լրացուցիչ պատիժ: | |

| | |
|-------------------------------------|---|
| Այլ պատժաչափեր: | |
| Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը): | |
| Բռնագանձնված գույքի չափը: | |
| Դատական ակտի բովանդակությունը: | <p>ԵԿԴ/0090/01/09</p> <p>Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ՝ դատավոր Գ.ՊՈՂՈՍՅԱՆԻ քարտուղարությամբ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ մասնակցությամբ՝ մեղադրող Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ տուժողի ներկ. Ա.ՄԱՑԱԿԱՆՅԱՆԻ ամբաստանյալ Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ պաշտպաններ Կ.ՔԱՄԱՆՅԱՆԻ Ա.ԱԹԱՐԲԵԿՅԱՆԻ Մ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ Վ.ԲԱԲԱՅԱՆԻ</p> <p>2010թ. ապրիլի 14-ին դատարանում՝ դռնբաց դատական նիստում, քննեց գործն ըստ մեղադրանքի Արսեն Հայկի Սարգսյանի՝ ծնված 15.02.1980թ. ք.Երևանում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, ամուսնացած, խնամքին երեք անձ, իր հայտարարությամբ՝ թերի բարձրագույն կրթությամբ և վատառողջ, «Էյ Թի ԷՅ մոբայլ» ՍՊ ընկերության հիմնադիր, չդատված, արգելանքի տակ է 2009թ. փետրվարի 10-ից, բնակվել է՝ ք.Երևան, Գուսան Շերամի փողոց, 77-րդ շենք, բնակարան հ. 41, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով:</p> <p>Գործի դատավարական նախապատմությունը. 2009թ. փետրվարի 02-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ ՔՎ քննիչ Հ.Ավետիսյանի որոշմամբ ՀՀ քրեա-կան օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հարուցվել է թիվ 582012089 քրեական գործը:</p> <p>2009թ. փետրվարի 10-ին ձերբակալվել է Արսեն Հայկի Սարգսյանը: ՀՀ ԿԱ ԱԱԾ ՔՎ քննիչ Հ.Ավետիսյանի 2009թ. փետրվարի 12-ի որոշմամբ Արսեն Սար-գրսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ու նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: ՀՀ ԿԱ ԱԱԾ ՔՎ քննիչ Հ.Ավետիսյանի 2009թ. մայիսի 7-ի որոշմամբ Արսեն Սարգսյան-նին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով:</p> <p>21.05.2009թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատա-րան՝ ըստ էության քննելու համար: Երևան քաղաքի նախկին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավա-սության դատարանի (դատավոր Գ.Պողոսյան) 2009թ. մայիսի 26-ի որոշմամբ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով քրեական գործն ընդունվել է վարույթ, իսկ 2009թ. հունիսի 09-ի որոշմամբ նշանակել է</p> |

դատաքննության:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի հա-մար, որ նա.

«Հանդիսանալով «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության միակ հիմնադիր և Երե-վանի Թումանյան 27 հասցեում նշված կազմակերպության կողմից վարձակալված «Գլոբալ մոբայլ» վաճառատարահում իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր, միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու հա-մար նախատեսված Pos-տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում նշված սարքը, ըստ 2008 թվականի հունիսի 23-ին «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրի, տեղադրվել է այդ վաճառատարահում: Այնուհետև, քննությանը չպարզված անձանցից ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում, այդ քարտերը գործածելով նշված Pos-տերմինալում, 18 գործարքով ԱՄՆ-ում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարին, միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառատարահից իրացված ապրանքի դիմաց վճարում և, դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այ-սինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափերով հանցավոր ձանապարհով ստաց-ված եկամուտները: Բացի դրանից, որոշ դեպքերում գողոնը ելքագրել է «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարից և այդ գումա-րը տնօրինել իր հայեցողությամբ:

Մասնավորապես, 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Արսեն Սարգսյանը, իբրև վա-ճառված ապրանքի դիմաց վճարում, «Գլոբալ մոբայլ» վաճառատարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով 5466264001383577 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427.000 դրամի համարժեք գու-մարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկե-րության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին նույն եղանակով 5490998311026349 համարի բան-կային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից գողաց-ված 982.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բաց-ված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին նույն եղանակով 5490999370256355 համարի բան-կային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 3 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամա-րից գողացված 2.946.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերու-թյունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբող-ջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 17-ին նույն եղանակով 5490990213934498 համարի բան-կային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 6 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամա-րից գողացված 5.892.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերու-թյունում բացված

«Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 25-ին նույն եղանակով 5490990089627168 համարի բան-կային քարտի կելծ կրկնօրինակով կատարված 7 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամար-րից գողացված 6.916.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, սակայն գողոնը չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով»:

Նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Սարգսյանն իրեն մեղավոր չի ճանաչել՝ պատճառաբանելով, որ իրեն մեղադրված արարքները չի կատարել: Միաժամանակ, ըստ մեղադրական եզրակացության, ցուցմունք է տվել այն մասին, որ. «Հանդիսանում է «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հիմնադիրը: Նշված ընկերությանն է պատկանում Երևանի Թումանյան 27 հասցեում գործող Գլոբալ Մոբայլ խանութը, որտեղ իրականացրել է բջջային հեռախոսների վաճառք: «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության հետ կնքել են պայմանագիր, համա-ձայն որի իր խանութում բանկի կողմից տեղադրվել է Pos-տերմինալ: Pos-տերմինալի միջոցով խանութի աշխատողները հնարավորություն են ունեցել հաճախորդներից բանկային քարտե-րով վճարումներ ընդունելու: Pos-տերմինալի հետ աշխատելու կարգը հետևյալն է՝ հաճա-խորդը, ցանկանալով կատարել վճարում «MasterCard» քարտերի միջոցով, տրամադրում է քարտը, որը անցկացվում է Pos-տերմինալի միջով, դրանից հետո, եթե Pos-տերմինալի վրա ե-րևում է «00» ծածկագիրը, ապա գործարքը կատարված է համարվում, իսկ եթե լինում է «01» կամ այլ ծածկագրեր, ապա գործարքը մերժված է և ինքը պետք է անհապաղ զանգահարի և այդ մասին տեղեկացնի բանկին: Իրենց խանութում Pos-տերմինալի միջոցով վճարման մոտ 8 դեպք է եղել, որից միայն վերջին երկուսն է կարողանում մանրամասն հիշել: Դրանք տեղի են ունեցել 2008 թվականի հոկտեմբերի 17-ին և 25-ին: 2008 թվականի հոկտեմբերի 17-ին խանութ է այցելել բարձրահասակ, մոտ 30-33 տարեկան, «ախպարի» լեզվով խոսացող մի տղամարդ և ցանկացել է զնել «8800 Arte» մակնիշի 12 հատ հեռախոս և ցանկացել է վճարել Master համակարգի քարտով: Նա քարտը փոխանցել է իրեն, ինքը քարտը անց է կացրել Pos-տերմինալով, այնուհետև Pos-տերմինալը փոխանցել է այդ հաճախորդին, որպեսզի վերջինս մուտքագրի ծածկագիրը: Հաճախորդը Pos-տերմինալի վրա մուտքագրել է ծածկագիրը, այ-նուհետև դուրս է եկել կտրոնը, որի վրա նշված է եղել «00»: 12 հեռախոսի համար ինքը հանել է 5.982.000 դրամ: Հավաստիանալով, որ չեկի վրա առկա է «00» կոդը, և քանի որ իր խանութում չի ունեցել Arte մակնիշի 12 հատ հեռախոս, ինքը հաճախորդի հետ պայմանավորվել է, որպեսզի վերջինս հեռախոսների ետևից գա մի քանի օրից: Հոկտեմբերի 21-ին ինքը «Ինեկո-բանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարից կանխիկացրել է հոկտեմբերի 17-ին կատարված գործարքից ստացված 5.982.000 դրամը և զնացել է խանութ: Հենց այդ օրն էլ հաճախորդը եկել է խանութ, որպեսզի վերցնի հեռախոսները: Ինքը նրան ասել է, որ հեռա-խոսները կլինեն երեկոյան կամ հաջորդ օրը: Դա լսելով, նա վրդովվել է և ետ է պահանջել գումարը: Չվիճելու համար ինքը ետ է վերադարձրել նրան 5.100.000 դրամը, իսկ մնացած գու-մարը պահել է իր մոտ: Հաճախորդը, վերցնելով գումարը, հեռացել է խանութից, որից հետո նրան այլևս ինքը չի տեսել: 2-րդ դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի 25-ին: Այդ անգամ խա-նութ է այցելել մոտ 40-42 տարեկան, ազգությամբ ռուս, մի հաճախորդ, որը ցանկացել է զնել 7.000.000 դրամի հեռախոս: Ինչպես նախորդ անգամ, ինքը հաճախորդից վերցրել է Master համակարգի քարտ և Pos-տերմինալով անցկացնելով, կրկին Pos-տերմինալը տրամադրել է հաճախորդին, ինչպես նախորդ անգամ, հաճախորդն անձամբ է հավաքել ծածկագիրը: Կըրտ-րոնները դուրս

են եկել նույնպես «00» ծածկագրով: Այդ ժամանակ ինքը խանութում չուներ հաճախորդի ցանկացած քանակության հեռախոսներ, և կրկին ինքը հաճախորդի հետ պայ-մանավորվել է, որպեսզի հեռախոսները տրամադրի մի քանի օրից: Պայմանավորվելուց հետո հաճախորդը հեռացել է խանութից, և դրանից հետո ինքը նրան այլևս չի տեսել: 2008 թվա-կանի հոկտեմբերի 27-ին զանգահարել և իրեն կանչել են «Ինեկոբանկ»: Այնտեղ իրեն բացա-տըրել են, որ իր խանութում սպասարկվել է գողացված քարտ, և որ ինքը կատարել է սխալ գործարք: Դրանից հետո բանկի հետ կնքվել է փոխհատուցման վերաբերյալ պայմանագիր (5.982.000 դրամ), որը «Էյթիեյ մոբայլ» ընկերության կողմից փոխհատուցվել է: Հոկտեմբերի 25-ին կատարված գործարքից ստացված գումարը չի կանխիկացրել: Ինքը իմանալով, որ visa electron քարտի սպասարկման ժամանակ հաճախորդի կողմից Pos-տերմինալի վրա պետք է հաճախորդը հավաքի ծածկագիրը և ինքը իրավունք չունի տեսնելու այդ ծածկագիրը, նույն կերպ սպասարկել է նշված գործարքների ժամանակ հաճախորդների ներկայաց-րած master համակարգի քարտերը և ուշադրություն չի դարձրել Pos-տերմինալի վրա նշված ծածկագրին: Ինքը հեռախոսները չի պատվիրել, սպասել է, մինչև գումարը կնստի իր հաշվե-համարին, որպեսզի կանխիկացնի և գնի այդ հեռախոսները: Որևիցե փաստաթուղթ չի պահանջել, իսկ հաճախորդներն իրենց հեռախոսահամարները թողնելուց հրաժարվել են՝ ասելով, որ իրենք կզան հեռախոսների ետևից: 2008 թվականի հոկտեմբերի 21-ին ինքն անձամբ գնացել է «Ինեկոբանկ» ՓԲԸ և «Էյթիեյ մոբայլ» ընկերության հաշվեհամարից կանխիկաց-րել հոկտեմբերի 17-ին կատարված գործարքից ստացված գումարը: Նշված 5.982.000 դրամ գումարից 5.100.000 դրամը վերադարձրել է հաճախորդին, իսկ մնացած գումարը պահել է իր մոտ, որից աշխատողներին աշխատավարձ է վճարել և խանութի գործունեության հետ կապ-ված այլ ծախսեր է կատարել»: Նախաքննության մարմինն ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնա-վորված է համարել տուժողի ներկայացուցչի ու վկաների ցուցմունքներով, իրեղեն ապացույց ճանաչված և այլ փաստաթղթերով ու փորձագետների եզրակացություններով: Դատարանի կողմից հաստատված հանգամանքները.

Դատաքննությամբ հաստատվեց, որ ամբաստանյալ Արսեն Սարգսյանը հիմնադրել է «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերությունը, որի տնօրենը թեև եղել է նրա ընկերը՝ վկա Հակոբ Կոտիկյանը, սակայն իրականում ընկերության գործունեությունը, այդ թվում՝ ընկերության կողմից վարձակալված՝ ք.Երևանի Թումանյան փողոցի հ. 27 հասցեում գործող «Գլոբալ մո-բայլ» վաճառարահում բջջային հեռախոսների մանրածախ առևտրի իրականացումը, դե-կավարել է ամբաստանյալը, ով բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար 2008 թվականի հունիսի 23-ին «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն ձեռք է բերել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված Pos-տերմինալ, որը տեղա-դրվել է վերը նշված վաճառարահում: Այնուհետև, ամբաստանյալը քննությամբ չպարզված անձանցից ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպ-տեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում դրանց միջոցով՝ Pos-տերմինալի օգտագործմամբ՝ անտեսելով գործարքը չթույլատրող՝ Pos-տերմինալի կողմից նշվող կողի առկայությունը, 18 գործարքով ԱՄՆ-ում գործող բանկերի հաճախորդների հաշ-վեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բաց-ված հաշվեհամարին՝ նշված գործարքները ձևակերպելով որպես վաճառարահից իրացված ապրանքի դիմաց վճարում: «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցված գումարների մի մասը՝ 10.247.000 դրամը, ամբաստանյալը

հետագայում կանխիկացրել և ստացել է բանկից, իսկ 6.916.000 դրամ չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով:

Այսպես.

2008 թվականի սեպտեմբերի 29-ին ամբաստանյալ Ա.Սարգսյանը, իբրև վաճառված ապրանքի դիմաց վճարում, «Գլոբալ մոբայլ» վաճառատարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով՝ 5466264001383577 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում, «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից գողացված գումարի համարժեքը՝ 427.000 դրամը, փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և անձամբ այն ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին նա՝ նույն եղանակով, 5490998311026349 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից գողացված գումարի համարժեքը՝ 982.000 դրամը, փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և անձամբ այն ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին նա՝ նույն եղանակով, 5490999370256355 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 3 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից գողացված գումարի համարժեքը՝ 2.946.000 դրամը, փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և անձամբ այն ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 17-ին նա՝ նույն եղանակով, 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 6 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից գողացված գումարի համարժեքը՝ 5.892.000 դրամը, փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և անձամբ այն ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 25-ին նա՝ նույն եղանակով, 5490990089627168 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 7 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից գողացված գումարի համարժեքը՝ 6.916.000 դրամը, փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, սակայն այն չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով:

Կատարված գործարքներից մի մասի վերաբերյալ ստացվել են 6.519.000 դրամի չափով հետգանձումային պահանջներ, որի արդյունքում նշված գումարը ելքագրվել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության հաշվից, սակայն ընկերությունը նշված գումարը պահանջել և ամբաստանյալի միջոցով ամբողջովին ստացել է «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերությունից:

Ապացույցների հետազոտում և գնահատում.

Ղատաքնությանը ամբաստանյալ Ա.Սարգսյանը նույնպես իրեն մեղավոր չճանաչեց առաջադրված մեղադրանքում և ցուցմունք տվեց այն մասին, որ «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է իր կողմից, և նշված ընկերությունը ք.Երևանի Թումանյան փողոցի 27 հասցեում գործող «Գլոբալ մոբայլ» խանութում իրականացրել է բջջային հեռախոսների մանրածախ առևտուր՝ վաճառք: Չնայած ընկերության տնօրեն է նշանակվել իր ընկերը, սակայն դա կրել է ձևական բնույթ, իրականում ընկերության գործունեությունը

դեկավարել է անձամբ և բանկի հետ կնքած պայմանագրով ձեռք է բերել և վերը նշված խանութում տեղադրվել է Pos-տերմինալ, որի միջոցով հնարավոր է հաճախորդներից բանկային քարտերով վճարումներ ընդունել: Նշված Pos-տերմինալի միջոցով կատարված գործարքներով վաճառվել են բջջային հեռախոսներ, և այդ գործարքներից երկուսը կատարել է անձամբ: Սակայն առաջին դեպքում քարտով վճարված և ընկերության հաշվին փոխանցված գումարի մի մասը՝ որպես խանութի եկամուտ, պահելով, մնացած մասը՝ 5.100.000 դրամը, վերադարձրել է գնորդին, քանի որ նա վրդովվել է, երբ իմացել է, որ հեռախոսները խոստացված օրը չի կարող ստանալ: Մյուս գործարքով փոխանցված գումարը մնացել է հաշվեհամարում, քանի որ բանկում պարզվել է, որ գնորդի կողմից կեղծ գործարք է կատարվել:

Երկու դեպքում էլ Pos-տերմինալը տրամադրել է գնորդներին, և երբ նրանք հավաքել են համապատասխան ծածկագիրն ու Pos-տերմինալից ստացվել է «00» կոդը, համոզվել է, որ գործարքը կատարված է: Քանի որ նշված գնորդներին չի կասկածել, նրանցից չի պահանջել անձնագիր:

Հետագայում, համագործակցելով բանկի հետ, վերականգնել է կեղծ գործարքների արդյունքում բանկին պատճառված վնասից մոտ 6.000.000 դրամը:

Տուժող «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արման Մնացականյանը ցուցմունք տվեց այն մասին, որ ամբաստանյալի կողմից Pos-տերմինալի միջոցով 17.10.2008թ. կատարված 5.892.000 դրամի և 25.10.2008թ. կատարված 6.916.000 դրամի գործարքները կատարվել են ամերիկյան բանկի հաճախորդ հանդիսացող անձանց քարտերի միջոցով և գու-մարները փոխանցվել են «Եյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերութ-յունում ունեցած համապատասխան հաշվին, որից ելքագրվել է 5.892.000 դրամը, իսկ 6.916.000 դրամը սառեցվել է: Բացի 6.916.000 դրամից, մնացած գումարներով ստացվել են հետգանձումային պահանջներ, նշված գումարները բանկի կողմից վճարվել են, իսկ ամբաստանյալը վերականգնել է բանկի վնասները:

Գործարքները կատարվել են Pos-տերմինալի միջոցով, որը «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն տեղադրվել է «Եյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության խանութում:

Չնայած գործարքների ընթացքում Pos-տերմինալի կողմից արձանագրվել են 01 կոդը, որի դեպքում գործարքը չի հավաստագրվում և պետք է դիմել քարտը թողարկող բանկին, սակայն գործարքը չի դադարեցվել և նույն ծածկագիրը մի քանի անգամ հավաքելով «կտրել» են պաշտպանական համակարգն ու համախոսակցել գումարներ, որոնցից ամբաստանյալը կանխկազմել և բանկային հաշվից ստացել է 10.000.000 դրամի չափով գումար:

Վկա՝ «Գլոբալ մոբայլ» խանութի վաճառողուհի, Աղավնի Պողոսյանը ցուցմունք տվեց այն մասին, որ Pos-տերմինալով գործարքներ կատարելն իրեն և մյուս վաճառողուհի Աննա Օկիչորին սովորեցրել է բանկի աշխատողը: Անձամբ միայն 200.000 դրամի սահմաններում է Pos-տերմինալով գործարքներ կատարել, քանի որ դրանից ավել գումարներով գործարքների ժամանակ դիմել են ամբաստանյալին, ում ինքն է սովորեցրել օգտվել Pos-տերմինալից, և նման գործարքները, այդ թվում՝ մեկ անգամ արևմտահայերեն խոսող, իսկ մեկ անգամ էլ ռուսախոս գնորդների հետ, նա է կատարել:

Վկա՝ «Գլոբալ մոբայլ» խանութի վաճառողուհի, Աննա Օկիչորը ցուցմունք տվեց այն մասին, որ Pos-տերմինալով գործարքներ կատարելն իրեն և մյուս վաճառողուհի Աղավնի Պո-ղոսյանին սովորեցրել է բանկի աշխատողը, սակայն անձամբ Pos-տերմինալով գործարքներ չի կատարել և տեղեկություն չունի դրանով կատարված գործարքների մասին:

Վկա Հակոբ Կտիկյանը ցուցմունք տվեց այն մասին, որ ընկերոջ՝ ամբաստանյալ Ա. Սարգսյանի խնդրանքով համաձայնվել և

նշանակվել է «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության տնօրեն: Սակայն դա կրել է ձևական բնույթ, քանի որ իրականում տնօրեն է եղել ամբաստանյալը, որի խնդրանքով ստորագրել է իրեն ներկայացված փաստաթղթերը՝ այդ թվում բանկային փաստաթղթեր, որոնցով վերջինս հնարավոր է, որ նաև գումարներ ստացած լինի:
Հիշում է, որ ամբաստանյալի խնդրանքով նաև ինչ-որ բանկի հետ պայմանագիր է կնքել:

Վկա՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության քարտային բաժնի ավագ մասնագետ, Դավիթ Սերոբյանը ցուցմունք տվեց այն մասին, որ 2008 թվականի հունիսի 23-ին «Ինեկոբանկ» ՓԲ և «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագրի համաձայն գնացել է «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության «Գլոբալ մոբայլ» բջջային հեռախոսների խանութ, որտեղ տեղադրել է Pos-տերմինալ և խանութի վաճառողուհիներին սովորեցրել է Pos-տերմինալի հետ աշխատելը, բացատրել է բանկային քարտեր սպասարկելու կարգը և տրամադրել է ու-դեցույց ձեռնարկ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն բացատրություններով:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորվում է նաև «Ի-րեդեն ապացույց ձանաչելու մասին» և «Այլ փաստաթղթերն ապացույց ձանաչելու և քրեա-կան գործին կցելու մասին» 07.05.2009թ. որոշումներով ապացույց ձանաչված հետևյալ փաստաթղթերով:

«Գլոբալ մոբայլ» բջջային հեռախոսների խանութում տեղադրված հ. 29010283 POS-տերմինալի 17.10.2008թ. հ.հ. 000015, 000016, 000017, 000018, 000019, 000020 և 25.10.2008թ. հ.հ. 000021, 000022, 000023, 000024, 000025, 000026, 000027 առևտրային չեկերի քսերոպատ-ձեռններով:

06.10.2008թ. դուրս գրված հ. 0027164 «Դրամարկղային չեկ»-ով՝ համաձայն որի Ար-սեն Սարգսյանը «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 428.000 դրամ:

07.10.2008թ. դուրս գրված հ. 0027165 «Դրամարկղային չեկ»-ով՝ համաձայն որի Ար-սեն Սարգսյանը «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 1.013.000 դրամ:

10.10.2008թ. դուրս գրված հ. 0027168 «Դրամարկղային չեկ»-ով՝ համաձայն որի Ար-սեն Սարգսյանը «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 2.853.000 դրամ:

21.10.2008թ. դուրս գրված հ. 0027173 «Դրամարկղային չեկ»-ով՝ համաձայն որի Ար-սեն Սարգսյանը «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 5.694.000 դրամ:

«Ինեկոբանկ» ՓԲ ընկերության և «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության միջև 23.06.2008թ. կնքված «Առևտրի և սպասարկման սրահներում բանկային քարտերը՝ որպես վճարման միջոց, ընդունելու վերաբերյալ» պայմանագրով:

«MasterCard» համակարգից ստացված բողոքարկումների քաղվածքով:

«Գլոբալ Մոբայլ» առևտրի սրահի (խանութի) «մուտքերի» տեսրով, որում առկա են մուտքագրված ապրանքների վերաբերյալ գրառումներ:

«Արմենիան Քարդ» ՓԲ ընկերության համակարգում գրանցված առևտրային կետերում արտասահմանյան «MasterCard» քարտերով կատարված կասկածելի, այդ թվում՝ «Գլոբալ Մոբայլ» առևտրի սրահում (խանութում) տեղադրված Pos-տերմինալով իրականացված, գործարքների ցանկով:

«Գլոբալ Մոբայլ» առևտրի սրահից (խանութից) վաճառված ապրանքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեսրով:

«Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության հ. 205002224090-1001 հաշվի՝ 01.09.2008թ.-ից մինչև 01.01.2009թ.

ներառյալ ընկած ժամանակա-հատվածի շարժի վերաբերյալ քաղվածքով:

04.05.2009թ. «Զննման արձանագրությամբ»՝ համաձայն որի գնմվել են «Գլոբալ Մո-բայլ» առևտրի սրահում տեղադրված POS-տերմինալի առևտրային չեկերը:

«Առգրավում և գնում կատարելու մասին» 25.02.2009թ.

արձանագրությամբ:

07.05.2009թ. «Զննման արձանագրությամբ»՝ համաձայն որի կատարվել է «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերությանը պատկանող պարզեցված հարկ վճարողի եկամուտների և ծախսերի հաշվառման գրքի ու թումանյան 27 հասցեում գտնվող «Գլոբալ Մոբայլ» առևտրի սրահի մուտքերի տետրի գնում:

04.05.2009թ. «Զննման արձանագրությամբ»՝ համաձայն որի կատարվել է «Արմենիան Քարդ» ՓԲ ընկերությունից ստացված, նշված ընկերության համակարգում գրանցված առև-տըրային կետերում արտասահմանյան «MasterCard» քարտերով կատարված կասկածելի գործարքների ցանկի գնում:

04.05.2009թ. «Զննման արձանագրությամբ»՝ համաձայն որի կատարվել է Ա.Սարգըս-յանի կողմից քննությանը ներկայացված՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված, «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերությանը պատկանող բանկային հաշվեհամարի առ

01.09.2008թ. ներառյալ 01.01.2009թ. շարժի վերաբերյալ քաղվածքի և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության կողմից թիվ 946 գրությամբ քննությանը տրամադրված «MasterCard» համակարգից ստացված բողոքարկումների քաղվածքի գնում:

04.05.2009թ. «Զննման արձանագրությամբ»՝ համաձայն որի կատարվել է Ա.Սարգըս-յանի կողմից ներկայացված թումանյան 27 հասցեում գտնվող «Գլոբալ Մոբայլ» խանութից վաճառված ապրանքների մասին տեղեկություններ պարունակող տետրի գնում:

04.05.2009թ. «Զննման արձանագրությամբ»՝ համաձայն որի կատարվել է Ա.Սարգըս-յանի կողմից քննությանը ներկայացված «Առևտրի և սպասարկման սրահներում բանկային քարտերը՝ որպես վճարման միջոց, ընդունելու վերաբերյալ» պայմանագրի, նշված պայմանագրի հավելված համարվող «Վճարային համակարգի սպասարկման ենթակառուցվածքում քարտերի սպասարկող անձի» ուղեցույց ձեռնարկի ու «Հավաստագրման կոդերի աղյուսակի» գնում:

18.04.2009թ. «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունից ստացված թիվ 946 գրությամբ՝ համա-ձայն որի ըստ «MasterCard» համակարգի կանոնների, հետգանձումային պահանջի ներկայացման առավելագույն ժամկետը 540 օր է և այդ ժամկետում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը կարող են ներկայացվել այլ ետգանձումային պահանջներ:

Ղատահաշվապահական փորձաքննության 31.03.2009թ. հ. 09-0361 եզրակացության համաձայն՝ 2008 թվականի հոկտեմբեր 17-ին և 25-ին կատարված գործարքները փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ են ստացել: Նշված գործարքներն իբրև ապրանքի վաճառք ներկայացնելը, ըստ էության նպատակա-ուղղված են եղել «Էյթիեյ մո-բայլ» ՍՊ ընկերության վաճառաարահում տեղադրված բանկային քարտերի սպասարկման POS-տերմինալի միջոցով ԱՄՆ «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից 5892000 դրամ գումարի և «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից 6916000 դրամ գումարի գողացման փաստի քողարկմանը, այսինքն՝ անօրինական ճանապարհով ստացված եկամտի իրական բնույթի և ծագման աղբյուրի խեղաթուրման միջոցով՝ ընդհա-նուր առմամբ՝ 12808000 դրամ գումարի եկամտի օրինականացմանը: Հաշվապահական հաշ-վառման դրույթների և նախաքննությամբ ձեռք բերված տվյալների տեսանկյունից, նշված գործարքները, ըստ էության բովանդակային առունով

անարժանահավատ են: Այդ գործարք-ների հետևանքով, «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից ուղղակի վնաս է պատճառվել ԱՄՆ-ի «MBNA AMERICA BANK» բանկի թվով 2 (երկու) հաճախորդներին համապատասխանաբար՝ 5892000 դրամ և 6916000 դրամ գումարի չափով, իսկ անուղղակի կերպով՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը՝ 12808000 դրամ գումարի չափով: Ղատահաշվապահական փորձաքննության 05.05.2009թ. հ. 09-0779 եզրակացության համաձայն՝ վերը նշված՝ 2008 թվականի սեպտեմբերի 29-ին, հոկտեմբերի 3-ին և 8-ին կա-տարված գործարքները փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ են ստա-ցել: Նման պայմաններում, նշված գործարքներն իբրև ապրանքի վաճառք ներկայացնելն, ըստ էության նպատակա-ուղղված են եղել «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության վաճառաարա-հում տեղադրված բանկային քարտերի սպասարկման POS-տերմինալի միջոցով ԱՄՆ «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427000 դրամ, «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմա-կերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից 982000 դրամ և «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից 2946000 դրամ գումարների գողացման փաստի քողարկմանն, այսինքն՝ անօրինական ճանապարհով ստացված եկամտի իրական բնույթի և ծագման աղբյուրի խեղաթյուրման միջոցով՝ ընդհանուր առմամբ՝ 4355000 դրամ գումարի եկամտի օրինականացմանը և հաշվապահական հաշ-վառման դրույթների և նախաքննությամբ ձեռք բերված տվյալների տեսանկյունից նշված գործարքներն, ըստ էության բովանդակային առումով անարժանահավատ են: Այդ գործարք-ների հետևանքով, «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից ուղղակի վնաս է պատճառվել ԱՄՆ-ի «MBNA AMERICA BANK» բանկի թվով 2 (երկու) հաճախորդներին համապատաս-խանաբար՝ 982000 դրամ, 2946000 դրամ գումարի և «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության 1 (մեկ) հաճախորդին 427000 դրամ գումարի չափով, իսկ անուղղակի կերպով՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը՝ 4355000 դրամ գումարի չափով:

Ղատարանի վերլուծություն.
Վերլուծելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը և համակցության մեջ գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դատարանը գտնում է, որ նախաքննության մարմինը ճիշտ պարզելով գործի փաստական հանգամանքները, որոնք հաստատվեցին նաև դատաքննությամբ հետազոտված ապացույցներով, ամբաստանյալի գործողություններին տվել է ճիշտ քրեաիրավական գնահատական՝ նրա կատարած արարք-ների որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով, որոնցով և նա պետք է պատասխանատվության ենթարկվի:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նրա կատարած հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության բարձր աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ Ա.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ դատարանը հաշվի է առնում, որ բնակության վայրում նա բնութագրվում է դրական, խնամքին ունի 3 անձ, որոնցից երկուսը մանկահասակ երեխաներն են և առաջին անգամ է դատապարտվում:

Ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ դատաքննությամբ չարձանագրվեցին:

Ղատարանը, քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ՝ որպես լրացուցիչ պա-տիժ, գույքի բռնագրավում նշանակելու նպատակահարմարության հարցը, գտնում է, որ այն պետք է

նշանակվի՝ հաշվի առնելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:
Քննության առնելով ամբաստանյալի գույքի՝ «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարների վրա դրված կալանքների պահպանման անհրաժեշտության հարցը, դատարանը գտնում է, որ դրանք պետք է պահպանվեն՝ որպես գույքի բռնագրավման և հնարավոր նյութական պահանջի ապահովում:
Քննության առնելով իրեղեն ապացույցների տնօրինման հարցը, դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պետք է պահվեն գործի հետ:
Քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, պետք է թողնվի անփոփոխ:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119, 357-360, 365 և 369 հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Արսեն Հայկի Սարգսյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով ու ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նրան դատապարտել ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, իսկ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից՝ որպես վնասի հատուցում, «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հիմնական պատիժները մասնակի, իսկ լրացուցիչ պատիժները լրիվ գումարելու միջոցով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժին մասնակիորեն գու-մարել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատ-ժից 2 (երկու) տարին ու, որպես վերջնական պատիժ, նշանակել ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 (տասնյոթ մի-լիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհա-մարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կող-մից՝ որպես վնասի հատուցում, «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրա-մի վրա:

Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան

քրեակատարողական հիմնարկում:

Պատժի կրման սկիզբը հաշվել 2009թ. փետրվարի 10-ից:

Իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պահել գործի հետ:

Ա.Սարգսյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ:

Ա.Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնել

անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ղատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ

դատարան՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա

ժամկետում:

| | |
|------------------------------------|-----------------------------|
| | ՂԱՏԱՎՈՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ |
| Ղատական ակտի ամսաթիվը: | 14-04-2010 |
| Գործը հանձնվել է գրասենյակ: | 19-05-2010 |
| Էջերի քանակ: | 1-241, 2-260, 3-163, 4-94 |
| Գործին կից նյութերը: | |
| Այլ նշումներ: | |
| Գործը ուղարկվել է: | 19-05-2010 |
| Էջերի քանակը: | 241, 260, 163, 94 |
| Գործին կից նյութերը: | Ա. Սարգսյանի անձնագիրը |
| Ուր(դատարան): | Քրեական և զինվորական վերաք. |
| Ուր: | |
| Ելքի գրության համարը: | Ե-12054 |
| Ամսաթիվ: | 19-05-2010 |
| Ամսաթիվ: | 16-05-2011 |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 19-05-2011 |
| Այլ նշումներ: | |
| Գործը հանձնվել է գրասենյակ: | 06-06-2011 |
| Էջերի քանակ: | 1-241, 2-260, 3-163, 4-307 |
| Գործին կից նյութերը: | |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 13-12-2010 |
| Էջերի քանակը: | 4 հ.,241,260,163,307 |
| Գործին կից նյութերը: | |
| Այլ նշումներ: | |
| Գործը ուղարկվել է: | 05-08-2011 |
| Էջերի քանակը: | 241 , 260, 163, 307 |
| Գործին կից նյութերը: | |
| Ուր(դատարան): | Վճռաբեկ |
| Ուր: | |
| Ելքի գրության համարը: | Ե-21150 |
| Այլ նշումներ: | |

| | |
|---------------------------------------|-------------------------|
| Ամսաթիվ: | 10-08-2011 |
| Ամսաթիվ: | 16-04-2012 |
| Այլ նշումներ: | |
| Գործը հանձնվել է գրասենյակ: | 11-05-2012 |
| Էջերի քանակ: | 369, 104 |
| Գործին կից նյութերը: | |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 11-05-2012 |
| Էջերի քանակը: | 369, 104 |
| Գործին կից նյութերը: | |
| Այլ նշումներ: | |
| Գործը ուղարկվել է: | 15-05-2012 |
| Էջերի քանակը: | 241, 259, 163, 369, 104 |
| Գործին կից նյութերը: | |
| Ուր(դատարան): | Վճռաբեկ |
| Ուր: | |
| Ելքի գրության համարը: | Ե-12660 |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 18-05-2012 |
| Ամսաթիվ: | 04-07-2012 |
| Այլ նշումներ: | |
| Դատական Գործ N: ԵԿԴ/0090/01/09 | |
| Ամսաթիվ: | 10-05-2010 |
| Անբաստանյալ | |
| Անձ | |
| Անուն | Արսեն |
| Ազգանուն | Սարգսյան |
| Հասցե | ք. Երևան, Թումանյան 17 |
| Հոդված_1 | |
| Հոդված | 177 Մաս 3 Կետ 1 |
| Դատվածություն: | |

| | | | |
|------------------------------------|---|-------|-------|
| Պաշտպան | | | |
| Անուն | չկա | | |
| Ազգանուն | չկա | | |
| Հասցե | չկա | | |
| Պատիժ: | | | |
| Հոդված_2 | | | |
| Հոդված | 190 | Մաս 3 | Կետ 1 |
| Խախտման միջոց: | Կալանավորում | | |
| Ում կողմից է բերվել բողոքը: | Տուժող | | |
| Ում կողմից է բերվել բողոքը: | Պաշտպան | | |
| Բողոքը բերող անձը | | | |
| Անուն | Արսեն | | |
| Ազգանուն | Սարգսյան | | |
| Հասցե | ք. Երևան, Թումանյան 17 | | |
| Բողոքը բերող անձը | | | |
| Անուն | Կրոմվել | | |
| Ազգանուն | Գրիգորյան | | |
| Հասցե | Արմավիրի մարզ, գ. Փարաքար | | |
| Բողոքի բովանդակությունը: | <p>Արսեն Սարգսյան Մասնակիորեն բեկանել և փոփոխել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Արսեն Հայկի Սարգսյանի /ՀՀ քր. օր-ի 177 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , ՀՀ քր.օր. 66 հոդ. 4-րդ և 5-րդ մասերի կարգով վերջնական պատիժ - 9 տարի ազ.՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ձանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով <<Ինտերբանկ>> ՓԲ ընկերությունում <<Էյթիել մոբայլ>> ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով <<Էյթիել մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում , <<Ինտերբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա / վերաբերյալ 14.04.2010թ. դատավճիռը՝ որպես վնասի հատուցում <<Ինտերբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավման մասով :</p> <p>Արսեն Սարգսյան Բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Արսեն Հայկի Սարգսյանի /ՀՀ քր. օր-ի 177 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , ՀՀ քր.օր. 66 հոդ. 4-րդ և 5-րդ մասերի կարգով վերջնական պատիժ - 9 տարի ազ.՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ձանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով <<Ինտերբանկ>> ՓԲ ընկերությունում <<Էյթիել մոբայլ>> ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով <<Էյթիել մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում , <<Ինտերբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա / վերաբերյալ 14.04.2010թ. դատավճիռը և Ա.Սարգսյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ : Ա.Սարգսյանին մեղավոր ձանաչելու դեպքում նրա նկատմամբ նշանակված 9 տարի ժամկետով ազատազրկումը ՀՀ քր.օր. 70 հոդ. կիրառմամբ պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 4 տարի ժամկետով :</p> | | |
| Բողոքի ստացման կարգը: | Առձեռն հանձնվել է գրասենյակ | | |
| Ամսաթիվ: | 07-05-2010 | | |
| Չափահաս: | Այո | | |

| | |
|--|---|
| Ամսաթիվ: | 14-05-2010 |
| Նախագահող դատավոր | |
| Դատարանի անվանում: | Քրեական և զինվորական վերաք. |
| Դատավորի անուն: | Մասիս Ռեհանյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Քրեական և զինվորական վերաք. |
| Դատավորի անուն: | |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 19-05-2010 |
| Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց: | Քրեական գործը չորս հատորից, համապատասխանաբար բաղկացած՝ <241>,<260>,<163>,<94> թերթերից և անբաստանյալի AB 0313004 անձնագիրը: |
| Ամսաթիվ: | 20-05-2010 |
| Երբ: | 04-06-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 12:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 14-06-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 14:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 25-06-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 11:30 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 15-07-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 12:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 30-07-2010 |

| | |
|-------------------------------|---|
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 15:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 13-08-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 12:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 29-09-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 16:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 29-09-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 16:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Երբ: | 14-10-2010 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 15:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 4 |
| Անփոփոխ թողնված դատական ակտը: | Պատճառաբանվել է |
| Ամսաթիվ: | 14-10-2010 |
| Ամբաստանյալ | |
| Անուն | Արսեն |
| Ազգանուն | Սարգսյան |
| Հասցե | Բնակվել է ք.Երևան, Գուսան Շերամի փողոց, 77-րդ շենք, 41 բնակարանում: |
| Քր. դատ. օր. հոդված | |
| Հոդված | 23, 304, 390, 393-394 |
| Քր. դատ. օր. հոդված | |
| Հոդված | 402 |
| Այլ նշումներ: | |
| Քր.օր. հոդված | |
| Հոդված | 177-րդ 3-րդ մասի 1-ին կետ., 190-րդ Մաս 3-րդ կետ 1-ին |

Ղատական ակտ:

ԳործԵԿԴ/0090/01/10

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ
ՂԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ՂԱՏԱԿՈՐ Մ.ՈՒՇԱԿՅԱՆ
ՂԱՏԱԿՈՐՆԵՐ Ա.ՂԱՆԻՇԵԱՆ
Մ. ԱՐՂԱՄԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Մասնակցությամբ՝

ՂԱՏԱԽԱԶ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆ՝ Վ.ԲԱԲԱՅԱՆԻ

2010թ. հոկտեմբերի 14-ին ք.Երևան

Ղռնբաց Ղատական նիստում, քննության առնելով պաշտպան
Կ.Գրիգորյանի և տուժողի վերաքննիչ բողոքներն՝ ամբաստանյալ
Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-
րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-
րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Երևան քաղաքի Կենտրոն և
Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության
Ղատարանի 2010թ. ապրիլի 14-ի Ղատավճռի դեմ,
Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի Ղատավարական նախապատմությունը.
2009թ. փետրվարի 02-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ
քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, ՀՀ քրեական
օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, ՀՀ
քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ
կետերով, հարուցվել է թիվ 582012089 քրեական գործը:
2009թ. փետրվարի 10-ին, Արսեն Հայկի Սարգսյանը ձերբակալվել է:
2009թ. փետրվարի 12-ին, ՀՀ ԿԱ ԱԱԾ ՔՎ քննիչ Հ.Ավետիսյանի
որոշմամբ՝ Արսեն Սարգսյանը ներգրավվել է՝ որպես մեղադրյալ և
նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի
2-րդ մասի 1-ին, 2-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի
2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:
2009թ. փետրվարի 13-ին, նախաքննական մարմինը միջնորդություն
է հարուցել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
ընդհանուր իրավասության Ղատարան՝ Արսեն Սարգսյանի
նկատմամբ՝ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու
մասին, որը Ղատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է:
2009թ. մայիսի 7-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ ՔՎ քննիչ Հ.Ավետիսյանի որոշմամբ
Արսեն Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել,
լրացվել ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական
օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, ՀՀ քրեական
օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով:
2009թ. մայիսի 18-ին, նախաքննական մարմնի որոշմամբ, թիվ
58201209 քրեական գործի վարույթից՝ չպարզված անձանց կողմից
առանձնապես խոշոր չափերով կեղծ վճարային քարտեր իրացնելու
մասով, հարուցվել է նոր քրեական գործ, այն առանձնացվել
առանձին վարույթ և նախաքննությունը կատարվել թիվ 58206209

համարով:

2009թ. մայիսի 21-ին քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է Երևան քաղաքի նախկին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. ապրիլի 14-ի դատավճռով՝ ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից՝ որպես վնասի հատուցում, «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հիմնական պատիժները մասնակի, իսկ լրացուցիչ պատիժները լրիվ գումարելու միջոցով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժից 2 (երկու) տարին և, որպես վերջնական պատիժ, նշանակվել՝ ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից՝ որպես վնասի հատուցում, «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

Պատժի կրման սկիզբը հաշվել 2009թ. փետրվարի 10-ից:

Արսեն Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճռվել է. իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պահել գործի հետ:

Ա.Սարգսյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ:

2. Գործի փաստական հանգամանքները

Նախաքննական մարմնի կողմից ամբաստանյալ Ա.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով այն բանի համար, որ նա՝ հանդիսանալով «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության միակ հիմնադիր և Երևանի Թումանյան 27 հասցեում նշված կազմակերպության կողմից վարձակալված «Գլոբալ մոբայլ» վաճառատնարահում իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր, միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված Pos-տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում նշված սարքը, ըստ 2008 թվականի հունիսի 23-ին «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության և «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրի, տեղադրվել է այդ վաճառատնարահում: Այնուհետև, քննությամբ չպարզված անձանցից ձեռք է բերել բանկային

քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում, այդ քարտերը գործածելով նշված Pos-տերմինալում, 18 գործարքով ԱՄՆ-ում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարին, միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառարահից իրացված ապրանքի դիմաց վճարում և, դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այսինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները: Բացի դրանից, որոշ դեպքերում գողոնը ելքագրել է «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարից և այդ գումարը տնօրինել իր հայեցողությամբ:

Մասնավորապես, 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Արսեն Սարգսյանը, իբրև վաճառված ապրանքի դիմաց վճարում, «Ղլոբալ մոբայլ» վաճառարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով 5466264001383577 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427.000 դրամի համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին նույն եղանակով 5490998311026349 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից գողացված 982.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին, նույն եղանակով 5490999370256355 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 3 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից գողացված 2.946.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 17-ին, նույն եղանակով 5490990213934498 համարի բան-կային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 6 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից գողացված 5.892.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 25-ին նույն եղանակով 5490990089627168 համարի բան-կային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 7 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից գողացված 6.916.000 դրամի չափով գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Էյ Թի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, սակայն գողոնը չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով»:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը. Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

վերաքննիչ բողոքի հեղինակը նշել է, որ դատաքննությանը հիմնավորվել է, որ ամբաստանյալ Արսեն Սարգսյանը հիմնադրել է <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊ ընկերությունը, որի տնօրենն է հանդիսացել սույն քրեական գործով վկա՝ Հակոբ Կտիկյանը: Երևանի թունամայան 27 հասցեում գործող <<Գլոբալ Մոբայլ>> խանութը վարձակալությամբ պատկանել է <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊ ընկերությանը, որտեղ իրականացրել է, բջջային հեռախոսների վաճառք:

Բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար 2008թ. հունիսի 23-ին, <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊ ընկերության և <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն, ձեռք է բերել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված POS-տերմինալ, որը տեղադրվել է, վերը նշված վաճառատարահում: Համաձայն պայմանագրի խանութում բանկի կողմից տեղադրվել է POS-տերմինալ: POS-տերմինալի միջոցով խանութի աշխատողները հնարավորության են ունեցել հաճախորդներից բանկային քարտերով վճարումներ ընդունելու:

Նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով չեն հաստատվել ամբաստանյալ Արսեն Սարգսյանին առաջադրված մեղադրանքները, մասնավորապես, չեն հաստատվել, որ քննությամբ չպարզված անձանցից Արսեն Սարգսյանը ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն նկատված ժամանակահատվածում բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները գործածելով նշված POS-տերմինալում, 18 գործարքով ԱՄՆ-ում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 դրամին համարժեք գումար և այն փոխանցել՝ <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊ ընկերության <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարին, չեն հաստատվել նաև, որ Արսեն Սարգսյանն այդ գործարքները ձևակերպել է, իբրև վաճառատարից իրացված ապրանքի դիմաց վճարում, չեն հաստատվել նաև, որ ամբաստանյալը խեղաթյուրելով 17.163.000 դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը օրինակացրել է առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները, չեն հաստատվել նաև, որ ամբաստանյալը որոշ դեպքերում գողացել է գումարներ և դրանք ելքագրել է <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊ ընկերության <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարից և այդ գումարը տնօրինել է իր հայեցողությամբ:

Նախաքննության ընթացքում նշանակված և կատարված դատաձեռնագրաբանական փորձագետի թիվ 09-0533 եզրակացությամբ հիմնավորվել է, որ POS-տերմինալի 25.10.2008թ. թվով 7 և 17.10.2008թ. թվով 6 կտրոնների վրա տեղավորված ստորագրությունները չեն կատարվել Արսեն Սարգսյանի, Հակոբ Կտիկյանի, Աղավնի Պողոսյանի և Աննա Օկիշորի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից:

Դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով հաստատվել են, որ թվով 16 գործարքով հաճախորդները, ցանկանալով վճարումը կատարել <<Էյ Թի էյ մոբայլ>> քարտերի միջոցով, տրամադրել են իրենց քարտերը, որոնք անցկացվել են POS-տերմինալի միջով, դրանից հետո, նկատի ունենալով, որ POS-տերմինալի վրա երևացել են <<00>> ծածկագիրը գործարքը համարվել է կատարված, իսկ եթե POS-տերմինալի վրա երևար <<01>> կամ այլ ծածկագրեր, ապա գործարքը կմերժվեր և ինքն անհապաղ կգանգառարեր և այդ մասին կտեղեկացներ բանկին: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավճիռը կայացվել է նյութական և դատավարական նորմերի խախտումներով:

Գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի հետևությունները հիմնված են ոչ թե դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այլ բառացիորեն արտատպված են մեղադրական եզրակացությունից:

Ամբաստանյալ Արսեն Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, 25-րդ հոդվածի 2-րդ մասի, 10-րդ, 108-րդ, 127-րդ, 216-րդ հոդվածների, 304-րդ, 353-րդ, 358-րդ և 360-րդ հոդվածների, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջները:

Դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով հաստատվել է, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն անհիմն է և ապօրինի, նրա կողմից կատարված գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին:

Իր պաշտպանյալին մեղադրանք առաջադրելիս նախաքննության մարմնի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, այն է, քրեական գործով բացակայել են անձին՝ իր պաշտպանյալին, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը:

Նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով չեն հաստատվել ամբաստանյալ Արսեն Սարգսյանին առաջադրված մեղադրանքները մասնավորապես, չեն հաստատվել որ քննությամբ չայարգված անձանցից Արսեն Սարգսյանը ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները գործածելով նշված POS-տերմինալում, 18 գործարքով ԱՄՆ-ում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 դրամին համարժեք գումար և այն փոխանցել է <<էյ թի էյ մորբայլ>> ՍՊԸ-ի <<Ինեկեբանկ>> ՓԲԸ-ում բացված հաշվեհամարին, չեն հաստատվել նաև, որ Արսեն Սրազսյանը այդ գործարքները ձևակերպել է իբրև վաճառարահից իրացված ապրանքի դիմաց վճարում, չեն հաստատվել նաև, որ ամբաստանյալը խեղաթյուրելով 17.163.000 դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը օրինականացրել է առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները, չեն հաստատվել նաև, որ ամբաստանյալը որոշ դեպքերում գողացել է գումարներ և դրանք ելքագրել է, <<էյ թի էյ մորբայլ>> ՍՊԸ ընկերության <<Ինեկեբանկ>> ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարից և այդ գումարը տնօրինել է իր հայեցողությամբ:

Նախաքննության ընթացքում նշանակված և կատարված դատաձեռագրաբանական փորձագետի թիվ 09-0533 եզրակացությամբ հիմնավորվել է, որ POS-տերմինալի 25.10.2008թ. թվով 7 և 17.10.2008թ. թվով 6 կտրոնների վրա տեղավորված ստորագրությունները չեն կատարվել Արսեն Սարգսյանի, Հակոբ Կտիկյանի, Աղավնի Պողոսյանի և ԱՆՆա Օկիչորի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից:

Դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով հաստատվել են, որ թվով 16 գործարքով հաճախորդները, ցանկանալով վճարումը կատարել <<էյ թի էյ մորբայլ>> քարտերի միջոցով, տրամադրել են իրենց քարտերը, որոնք անցկացվել են POS -տերմինալի միջոցով, դրանից հետո, նկատի ունենալով, որ POS -տերմինալի վրա երևացել են <<00>> ծածկագիրը գործարքը

համարվել է կատարված, իսկ եթե POS -տերմինալի վրա երևար <<01>> կամ այլ ծածկագրեր, ապա գործարքը կմերժվեր և ինքն անհապաղ կզանգահարեր և այդ մասին կտեղեկացներ բանկին: Ղատաքնության ժամանակ հետագոտված ապացույցները հիմք են տալիս ենթադրելու, որ Արսեն Սարգսյանին առաջադրված մեղադրանքներն անհիմն են և ապօրինի, որովհետև հանցանք գործելու մեջ ամբաստանյալի մեղավորության մասին հետևությունները հիմնված են միայն ենթադրությունների վրա, դրանք չեն հաստատվել գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջա թյամբ: Նախաքնության մարմնի կողմից խախտվել են << քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որովհետև հանցանք գործելու մեջ ամբաստանյալի մեղավորության մասին հետևությունները չեն կարող հիմնվել ենթադրությունների վրա, դրանք պետք է, հաստատվեն գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Ամբաստանյալին մեղադրանք առաջադրելիս նախաքնության մարմնի կողմից խախտվել է << քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, այն է, քրեական գործով բացակայել են անձին՝ իր պաշտպանյալին, որպես մեղադրյալներգրավելու հիմքը՝ նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունը: Գործով հավաքված ապացույցները նախաքնության մարմնի կողմից չեն ենթարկվել բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման, գործով հավաքված ապացույցները չեն ենթարկվել գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

Նախաքնության մարմնի կողմից խախտվել են նաև << քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որովհետև չեն ձեռնարկվել << քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, չեն ստուգվել մեղադրյալին արդարացնող հանգամանքները:

Նախաքնության մարմնի կողմից խախտվել են նաև քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, որովհետև մեղադրյալի հայտարարություններն իր անմեղության, իրեն արդարացնող ապացույցների առկայության մասին նախաքնության մարմնի կողմից ոչ միայն մանրակրկիտ չեն ստուգվել, այլ ընդհանրապես չեն ստուգվել:

Ամբաստանյալին մեղադրանք առաջադրելիս խախտվել է նաև << քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որովհետև կանխակալ մոտեցում է, ցուցաբերվել տուժողի ներկայացուցիչ Արման Մնացականյանի, վկաներ Ղավիդ Սերոբյանի, Հակոբ Կտիկյանի, Աղավնի Պողոսյանի, Աննա Օկիշորի ցուցմունքներին, այդ ցուցմունքները Արսեն Սարգսյանի ցուցմունքների նկատմամբ առավել նշանակություն տրվել:

Համաձայն << քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի մեղադրանքի ապացուցման և մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Ինչպես նախաքնության ընթացքում, այնպես էլ դատաքնության ընթացքում հետագոտված ապացույցներով մեղադրանքի կողմը չի հերքել ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկները, չի ապացուցել առաջադրված մեղադրանքը:

Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ մեղադրանքի կողմի բոլոր ենթադրությունները կասկածներ են, որոնք ինչպես նախարնությանմբ, այնպես էլ դատաքնությամբ << քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չեն

փարատվել և պետք է մեկնաբանվեն հոգուտ մեղադրյալի: Հանցանք գործելու մեջ ամբաստանյալի մեղավորության մասին մեղադրողի հետևությունները հիմնված են ենթադրությունների վրա, որոնք հաստատված չեն գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Նախաքննության մարմնի ու դատարանի կողմից ձեռք բերված և դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով չեն հաստատվել իր պաշտպանյալին նախաքննության մարմնի կողմից առաջադրված մեղադրանքները:

Մեղադրողի ճառի հետևություններն անհիմն են, դրանք հաստատված չեն գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այն բառացի հիմնված է մեղադրական եզրակացության վրա, որի հետևությունները հիմնված են միայն ենթադրությունների վրա:

Նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքներում նշված հանգամանքները չեն հաստատվել:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի միայն ապացույցների հիման վրա պետք է, հաստատվեն՝ դեպքը և հանգամանքները, մեղադրյալի առնչությունը դեպքին, հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները, մեղադրյալի մեղավորությունը քրեական օրենքով արգելված արարքը կատարելու մեջ:

Նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով ամբաստանյալի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցություն ձեռք չի բերվել:

Դատաքննությանը մասնակցող մեղադրողը չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. չի կատարել մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն ամբաստանյալ Արսեն Սարգսյանի բերված փաստարկների հերքման պարտականությունը: Ամբաստանյալը պարտավոր չէ, ապացուցել իր անմեղությունը: Ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով չի ապացուցվել արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է Արսեն Սարգսյանը, ամբաստանյալի գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված նորմերի հատկանիշներին, իր գործողությունների համար ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով չպետք է մեղադրանք առաջադրվեր:

Փաստորեն, խախտելով ապացույցների գնահատումն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, նախաքննության մարմինը պատշաճ գնահատման չի ենթարկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող վերը նշված հանգամանքները:

Ամբաստանյալ Արսեն Սարգսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունը կատարելու մասին նախաքննության մարմնի հետևությունները չեն բխում գործի փաստական տվյալներից և չեն կարող ճանաչվել հիմնավորված և պատճառաբանված:

Քրեական գործով հավաքված ապացույցները դատարանի կողմից ենթարկվել են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման, սակայն դրանք չեն ենթարկվել գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարյալ տեսանկյունից:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի մեղադրյալը

պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:
Համաձայն ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի <<Արգելվում է օրենքի խտխտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը>>:

Փաստորեն, խախտելով ապացույցների գնահատումն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող վերը. նշված հանգամանքները: Ամբաստանյալ Արսեն Սարգսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունը կատարելու մասին դատարանի հետևությունները չեն բխում գործի փաստական տվյալներից և չեն կարող ճանաչվել հիմնավորված ու պատճառաբանված:

Սույն գործի քննության ընթացքում թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է, հանգեցրել է արարքի չհիմնավորված որակման, ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և դատավճիռը բեկանելու հիմք է:

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի պահանջները:

Դատավճիռ կայացնելիս դատարանը կոպիտ կերպով խախտել է դատավճիռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով, նախաքննության մարմնի, դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 107-րդ, 108-րդ հոդվածների, 358-րդ հոդվածի և 398-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումներ, որոնք քրեադատավարական օրենքի էական խախտում են, ազդել են դատավճիռի օրինականության կրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հիմք են առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու համար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավիճում անօրինական է, որովհետև այն կայացվել է ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և այն օրենքների պահանջների խախտմամբ, որոնց նորմերը կիրառվել են սույն քրեական գործը լուծելիս:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավիճում հիմնավորված չէ որովհետև դրա հետևությունները հիմնված չեն միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, ապացույցները բավարար չեն մեղադրանքը գնահատելու համար և դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները չեն համապատասխանում դատարանում հետազոտված ապացույցներին:

Դատավճիռը <<Չնայած գործարքների ընթացքում POS-տերմինալի կողմից արձանագրվել է 01 կողը, որի դեպքում գործարքը չի հավաստագրվում և պետք է դիմել քարտը թողարկող բանկին, սակայն գործարքը չի դադարեցվել և նույն ծածկագիրը մի քանի անգամ հավաքելով <<կտրել>> են պաշտպանական համակարգն ու հափշտակել գումարներ, որոնցից ամբաստանյալը կանխիկացրել և բանկային հաշվից ստացել է 10.000.000 դրամի չափով <<գումար>> հետևությունները անհիմն են, որովհետև հետևությունը հիմնավորող ապացույց նախաքննության մարմնի կողմից ձեռք չի բերվել, իսկ դատաքննության ժամանակ չի հետազոտվել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավիճում պատճառաբանված չէ, որովհետև պատճառաբանման չեն

ենթարկվել դատարանի կողմից դատավճռում շարադրված հետևությունները:

Դատավճիռ կայացնելիս ընդհանուր իրավասության դատարանը խախտել է քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Ինչպես մեղադրողի, այնպես էլ դատարանի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որովհետև մեղադրողը վիճաբանությունների փուլում, իսկ դատարանը դատավճիռ կայացնելիս չեն հիմնվել միայն այն ապացույցների վրա, որոնք հետազոտվել են դատաքննության ժամանակ, այլ հիմնվել են մեղադրական եզրակացության վրա, իսկ մեղադրական եզրակացության հետևությունները հիմնված են ենթադրությունների վրա:

Դատարանի դատավճռի հետևությունները հիմնված են ոչ թե դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այլ բառացի արտատպված են մեղադրական եզրակացությունից և հիմնված է, միայն ենթադրությունների վրա: Դատախազված և դատաքննության ժամանակ հետազոտված վկաների ցուցմունքներով ոչինչ չի հիմնավորվել, այլ հերքվել է, նախաքննության մարմնի կողմից Արսեն Սարգսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սռաջադրված մեղադրանքը: Այս պայմաններում, երբ քրեական գործով փաստական հանգամանքները հաստատող օբյեկտիվ տվյալները բացակայում են հնարավոր է, ապացուցված համարել, որ ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքը տեղի է ունեցել:

Խնդրել է հանդես չգալ մեղադրանքի կողմում, արտահայտել միայն իրավունքի շահերը:

Քրեական գործով հավաքված ապացույցները դատարանի կողմից ենթարկվել են բաղմակողմանի և օբյեկտիվ ստուգման, դրանք չեն ենթարկվել գնահատման վերաբերելիության, թույլտվության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

Գտնում է, որ դատարանի դատավճռի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե մեղադրողի ճառում հնչած ենթադրությունների վրա, այլ դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա:

Ելնելով վերոգրյալից, պաշտպանության կողմն արձանագրում է, որ նման պայմաններում Արսեն Սարգսյանի նկատմամբ 14.04.2010թ. կայացված դատավճիռը անօրինական է և չհիմնավորված, քանի որ գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն մեղադրանքը գնահատելու համար, բացի այդ դատարանը միայն իրավունքի շահերն արտահայտելու փոխարեն հանդես է եկել մեղադրանքի կողմում:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի գործին նոր մասնակցող պաշտպանն իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը դատական քննության ընթացքում կատարվել է նախքան իր ընդգրկվելը գործին: Նախքան իր ընդգրկվելը հարացքաննվել են տուժողի ներկայացուցիչ Արման Մնացականյանը և ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանը, որոնց հարցաքննություններով գործի համար ամբաստանյալին առաջադրված մեղադրանքով, էական հանգամանքներ են պարզվել: Միաժամանակ ցուցմունքներում նշվել են հանգամանքներ, որոնց պարզելու կապակցությամբ դատավարության մասնակիցների կողմից հարցադրումներ չեն կատարվել:

Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով, 73-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 304-րդ հոդվածի 2-րդ մասով միջնորդություն է հարուցել կրկնել վկաներ Աղավին

Պողոսյանի, Աննա Օկիշորի, Հակոբ Կտիկյանի, տուժողի ներկայացուցիչ Արման Մնացականյանի և ամբաստանյալի հարցաքննությունները, որը դատարանն անհիմն պատճառաբանություններով մերժել է:

Գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պետք է անդրադառնա պաշտպանի օրինական միջնորդությանը և կրկնի վկաներ Աղավնի Պողոսյանի, Աննա Օկիշորի, Հակոբ Կտիկյանի, տուժողի ներկայացուցիչ Արման Մնացականյանի և ամբաստանյալի հարցաքննությունները:

Խախտվել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետը և 3-րդ կետերը:

Եթե դատարանը կգտնի, որ Արսեն Սարգսյանը կատարել է հանցավոր արարք ամբաստանյալ Արսեն Սարգսյանը իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ ցանկանում է օգտվել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իրավունքից և մատնանշում է նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ՀՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները, այն է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 02.04.2009թ. թիվ ԵԿԴ/0022/01/09 քրեական գործով ըստ մեղադրանքի Վարդան Տիգրանի Ավետիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում իր կողմից ներկայացվել է նշված դատական ակտը, սակայն դատարանը դրան չի անդրադարձել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար, ինչ պատիժ պետք է, նշանակվի նրա նկատմամբ, ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվեր ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի մի շարք հոդվածներով:

Նշված նկատառումներով գտնում է, որ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ պետք է համարի փոփոխել Արսեն Սարգսյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավճիռը և նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով և 376-րդ, 379-րդ, 3801-րդ, 393-395-րդ հոդվածներով խնդրել է բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կայացված դատավճիռը: Թիվ 58201209 քրեական գործով, ըստ մեղադրանքի Արսեն Հայկի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ:

Մեղավոր ճանաչելու դեպքում Արսեն Հայկի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավճիռը փոփոխել և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և

190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված 9/ինը/ տարի ժամկետով ազատագրվումը նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ չկիրառել, սահմանել փորձաշրջան չորս տարի ժամկետով:

Տուժողն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. թիվ ԵԿԴ/0090/01/09 քրեական գործով, ըստ մեղադրանքի Արսեն Հայկի Սարգսյանի, կայացված դատավճռով դատարանը վճռել է «<էյ Թի էյ մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից «<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությանը որպես վնասի հատուցում վճարված 6.585.294 ՀՀ դրամը (ձիշտ գումարը 6.519.000 ՀՀ դրամն է) բռնագրավել: Նշված դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերվել նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով և խնդրել են այն բեկանել և փոփոխել «<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավման մասով, հետևյալ հանգամանքները և օրենքի պահանջները նկատի ունենալով:

Սույն քրեական գործով տուժող «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի և «<էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ-ի միջև, որի միակ հիմնադիրն է հանդիսանում Արսեն Սարգսյանը, կնքվել է պայմանագիր, որի հիման վրա «<էյ Թի էյ մոբայլ>>ՍՊԸ-ին պատկանող բջջային հեռախոսների մանրածախ վաճառքով զբաղվող խանութում Բանկի կողմից տեղադրվել է POS-տերմինալ վճարային քարտերով գործարքների իրականացման համար: «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի նշված POS-տերմինալի միջոցով կատարված գործարքների մի մասի դիմաց ստացված 17.163.000 ՀՀ դրամ գումարը Դատարանը ճանաչել է Արսեն Սարգսյանի կողմից հանցավոր ճանապարհով ստացված գույք: Ա. Սարգսյանի կողմից «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ին պատկանող POSտերմինալի միջոցով կատարված զեղծարար (քարտապանի կողմից չհավաստագրված) գործարքների արդյունքում MasterCard վճարային համակարգից ստացվել է ետզանձումաին պահանջ և համաձայն MasterCard վճարային համակարգի կանոնների, ԱՄՆ-ի բանկի հաճախորդ-քարտապանին պատճառված վնասը անակցեպտ կարգով գանձվել է «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ին պատկանող դրամական միջոցներից: «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի կողմից փաստացի կրած վնասի հատուցման պահանջ է ներկայացվել «<էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ-ին: Միաժամանակ փաստի առթիվ հարուցված սույն քրեական գործով «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն ճանաչվել է տուժող և ներկայացրել է քաղաքացիական հայց քրեական գործի շրջանակներում: «<էյ Թի էյ մոբայլ>>ՍՊԸ-ի կողմից գրված պարտավորագրի համաձայն՝ մոտ մեկամսյա ժամկետում ամբողջությամբ վերականգնվել է «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի կրած վնասը, փոխհատուցվել է «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ից էլքագրված և վերջինիս սեփականությունը հաղիսացող գումարները: Արդեն գործի դատաքննության փուլում իր փաստացի կրած վնասը հատուցված լինելու հիմքով տուժող «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն այլևս հանդես չի եկել որպես քաղաքացիական հայցվոր և քաղաքացիական հայցի պահանջ դատարանում չի ներկայացրել: Մինչդեռ «<Ինեկոբանկ>> ՓԲԸ սեփականությունը հանդիսացող անակցեպտ կարգով գանձված գումարները, որոնք վերականգնվել էին մինչև գործի դատաքննությունը, բողաքարկվող դատավճռով դատարանը համարել է որպես բռնագրավման ենթակա «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ից՝ վերջինիս կրկին անգամ թողնելով տուժողի կարգավիճակում խախտելով «<Ինեկոբանկ>> ՓԲԸ սեփականության իրավունքը: Որպես վնասի հատուցում «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ին վճարված գումարը հանդիսացել է «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի սեփականությունը, որն օրինական հիմքով տիրապետվում և օգտագործվում էր Ինեկոբանկի կողմից: Սույն քրեական գործով տուժող «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն հանդիսանալով, դատավճռի համաձայն, բռնագրավման ենթակա 6.585.294 ՀՀ դրամի սեփականատեր և ըստ էության բարեխիղճ երրորդ անձ, գրկվում է իր սեփականությունից դատավճռի բռնագրավման պահանջը կատարելու դեպքում:

Փաստորեն, հատուցված վնասի գումարի բռնագրավումը <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ից հանդիսանում է նյութական իրավունքի խախտում, մասնավորապես խախտվում է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը, որի համաձայն բռնագրավման ենթակա չէ բարեխիղճ երրորդ անձի գույքը: Վերոհիշյալ տրամաբանությամբ, բողոքարկվող դատավճռի կիրառման արդյունքում <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ն երկրորդ անգամ կհայտնվի տուժողի կարգավիճակում, այս անգամ արդեն նույն վերականգնված գումարի կամ պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքից զրկված: Վերը նկարագրված պայմաններում, երբ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող դրամական միջոցների անակցեպտ գանձումից ԱՄՆ-ի բանկի հաճախորդ-քարտապանի վնասը վերականգնվել է, և երբ արդեն առկա չէ նշված քարտապանի սեփականության իրավունքի խախտում, <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ից դատավճռով սահմանված փոխհատուցված գումարի բռնագրավմամբ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որում ամրագրված է՝ <<1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից աաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը...>>: ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը կայանում է նրանում, որ բողոքարկվող դատավճռով խախտվում է <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի՝ որպես իրավաբանական անձի, իրավունքը՝ մասնավորապես՝ 6.585.294 ՀՀ դրամի նկատմամբ սեփականության իրավունքը: Դատարանի կողմից խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի պահանջները: Սույն քրեական գործով առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր, դատավճռի համաձայն, բռնագրավման ենթակա գումարի սեփականատեր <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի անբարեխիղճ լինելու կամ այդ գումարը ոչ օրինական հիմքերով տիրապետելու վերաբերյալ: <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ կողմից գեղծարար քարտով 17.10.2008թ. կատարված գործարքների հետևանքով «MasterCard» համակարգի անակցեպտ կարգով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ թղթակցակի հաշվից գանձել է ԱՄՆ-ի <<MBNA AMERICA BANK USA NA>> բանկի հաճախորդ-քարտապանին պատճառված վնասը, քանի որ «MasterCard» համակարգի կանոնների համաձայն <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Pos-Տերմինալներով կատարված չհավաստագրված գործարքներից (գործարքը կարող է չհավաստագրվել նաև ապրանքի որակի, քանակի, մատակարարումն ուշացնելու և այլն) պատճառված վնասը մինչև վնաս պատճառողին պարզելը, պետք է հատուցվի <<Ինեկոբանկ>> ՓԲԸ կողմից: Դրանից հետո <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի հետադարձ պահանջի բավարարման նպատակով <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ տնօրենի կողմից 28.10.2008թ. գրվել է համապատասխան պարտավորագիր, որի պայմաններին համապատասխան էլ մեկանսյա ժամկետում վերականգնվել է «<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի վնասը: Այսինքն՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ին վերադարձվել է իր սեփականությունը հանդիսացած գույքը՝ տվյալ դեպքում՝ դատավճռի համաձայն, բռնագրավման ենթակա գումարը, կամ այլ կերպ ասած, <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ի միջոցով <<Էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ-ն կանովին վերականգնել է ԱՄՆ-ի բանկի հաճախորդ-քարտապանին պատճառված վնասը: Հարկ է նշել նաև, որ սույն քրեական գործով առկա չէ որևէ ապացույց առ այն, թե կոնկրետ ում կամ որ դրամական միջոցներով են վերականգնվել <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ին պատճառված վնասները, ինչպիսի պայմաններում միայն, պարզելով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ-ին հատուցված դրամական միջոցների ծագման աղբյուրը, դատարանը կարող էր գտնել, որպես բռնագրավման հիմք նշել, իրենց պնդմամբ, բռնագրավման ոչ ենթակա բարեխիղճ երրորդ անձի գույք հանդիսացող դրամական

միջոցների գողացված լինելու համաձայնագրեր...:

Վնասի վերականգնման տեսանկյունից, հարկ է անդրադառնալ նաև այն փաստին, որ սույն քրեական գործի նախաքննության փուլում <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ն տուժող ճանաչվելուց զատ, ներկայացրել էր նաև քաղաքացիական հայց, որից հրաժարվել է մինչև գործը դատաքննության ուղարկելը իր վնասը վերականգնելու հիմքով: Ստացվում է, որ եթե սույն քրեական գործի նախաքննության ընթացքում <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ի վնասը չվերականգնվեր և Բանկը քաղաքացիական հայցը պնդեր դատարանում, այն մերժվելու էր ամբողջությամբ, բողոքարկվող դատավճռի համաձայն: <<Պատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ <<Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանություններ) />>: Նույնանման փաստական հանգամանքներով թիվ ԵԿԴ/0022/01/09 քրեական գործով 02.04.2009թ. կայացված օրինական ուժի մեջ մտած դատավճռով, երբ տուժող <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ն 1.000.000 << դրամի քաղաքացիական հայց էր ներկայացրել, վճռվել է. <<Գործով տուժողի ներկայացուցիչ Արման Մնացականյանի քաղաքացիական հայցի պահանջը 1.000.000 << դրամի չափով բավարարել, այն բռնագանձել <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ում կալանքի տակ գտնվող 15.000.000 << դրամից>>: Հիշատակված 15.000.000 << դրամը հանդիսանում էր նույն կարգավիճակի գումար, ինչպիսին որ սույն քրեական գործով <<էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ-ի հաշիվներին սառեցված ու կալանքի տակ գտնվող 6.916.000 << դրամ գումարն է <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ում: Հիշատակված օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նկատի ունենալով, գտնում են, որ նույնիսկ <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ին պատճառված վնասը վերականգնված չլինելու և փաստացի կրած 6.519.000 << դրամ վնասի հատուցման քաղաքացիական հայց ներկայացնելու դեպքում, այն ենթակա էր բավարարման <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ում կալանքի տակ գտնվող 6.916.000 << դրամ գումարից: Փոխարենը բողոքարկվող դատավճռով դատարանը գրկել է <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ին իր սեփականությունից խախտելով << Սահմանադրության (հոդված 8., 31.) և Եվրոպական կոնվենցիայի (հոդված 1., 6.*3) սեփականության պաշտպանության վերաբերյալ համապատասխան հոդվածները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ դատավճռի <<ապացույցների հետազոտում և գնահատում>> բաժնի 7-րդ էջում հաստատել է որ <<էյ Թի էյ մոբայլ>> ՍՊԸ-ի կողմից <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ին պատճառվել է վնաս, սակայն թե ինչպես պետք է վերականգնվի այդ վնասը, որը քրեական օրենսգրքի և սույն գործը քննող դատարանի խնդիրն է, ընդհանրապես անտեսվել է, այսինքն, համաձայն դատավճռի, <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ին փաստացի պատճառված և սույն քրեական գործով հաստատված վնասը վերականգնման ենթակա չէ: Ավելին, բողոքարկվող դատավճռով դատարանը խախտելով վերոնշյալ հոդվածները, նյութական և դատավարական իրավունքի պահանջները ոչ միայն չի վերականգնել <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ի խախտված սեփականության իրավունքը, այլ նաև գրկել է <<Ինտելիգենցիա>> ՓԲԸ-ին իր սեփականությունից: Վերոգրյալը, ինչպես նաև << քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին կետը, 394-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, << վերաքննիչ քրեական դատարանին խնդրել են մասնակիորեն բեկանել և փոփոխել (չեղյալ համարել) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Սարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. թիվ ԵԿԴ/0090/01/09 դատավճիռը որպես վնասի հատուցում <<Ինտելիգենցիա>> ՓԲ Ընկերությանը վճարված 6.585.294 << դրամի բռնագրավման մասով:

4.Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանը.

Բերված վերաքննիչ բողոքի դեմ առարկեց գործով մասնակցող մեղադրող Հ.Սարգսյանը՝ նշելով որ ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի առաջադրված մեղադրանքը հիմնավոր է, արարքը ճիշտ է որակված և նրա նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ:

Խնդրեց Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. ապրիլի 14-ի դատավճիռը թողնել անփոփոխ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքները մերժել:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վերաքննիչ բողոքները նշված հիմքերի սահմաններում, վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. ապրիլի 14-ի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքները մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում՝ 1.Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար

պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),իսկ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը պատասխանատվություն է սահմանում՝ սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ փողերի լվացում ասելով՝ հասկանում ենք այնպիսի գումարների օրինականացումը, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, այսինքն՝ մութ ճանապարհով ստացված եկամուտների տեղափոխումը օրինական դաշտ, որը թույլ է տալիս հանցավոր ճանապարհով ձեռք բերված խոշոր գումարներից օգտվել հանրորեն և օրինական կերպով: Առաջին հայացքից, ինչպես նաև փաստաթղթային տեսանկյունից դրանք բավականին հմտորեն քողարկված են: Ինչպես նաև այդ գործընթացի արդյունքում կարող է փոփոխվել տվյալ գումարի ստացման, օգտագործման եղանակը.ինչպես կանխիկից անկանխիկ, այնպես էլ հակառակը:Փողերի լվացման ժամանակ տեղի է ունենում տվյալների փոփոխություն: Փոխվում է եկամտի իրական աղբյուրը, սա կարող է իր արտահայտումը ստանալ նաև գրավոր փաստաթղթային ձևով, այսինքն՝ տեղի է ունենում փաստաթղթերի կեղծում: Նմանատիպ գործունեությունը կատարյալ կերպով կոծկելու համար օգտագործվում են նաև երրորդ անձանց փաստաթղթեր:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները գնահատվում են բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ստուգման, ինչպես նաև դրանց գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, որպիսի պահանջները իրավացիորեն պահպանվել են ընդհանուր իրավասության դատարանի կողմից և սույն քրեական գործով ձեռք բերված

ապացույցները գնահատելիս հանգել է ճիշտ հետևության: Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում պաշտպանական կողմի բերած պատճառաբանություններն այն մասին, որ իր պաշտպանյալ Արսեն Հայկի Սարգսյանի կողմից կատարված արարքում բացակայում է հանցակազմը և նրա նկատմամբ դատարանը պարտավոր էր կայացնել արդարացման դատական ակտ, քանի որ ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորվել է նախաքննությամբ ձեռք բերված, դատաքննությամբ հետազոտված և դատական ակտում չարադրված տուժողի ներկայացուցչի, վկաների ցուցմունքներով, ինչպես նաև հետևյալ ապացույցներով. <<Գլոբալ մոբայլ>> բջջային հեռախոսների խանութում տեղադրված հ. 29010283 POS-տերմինալի 17.10.2008թ. հ.հ. 000015, 000016, 000017, 000018, 000019, 000020 և 25.10.2008թ. հ.հ. 000021, 000022, 000023, 000024, 000025, 000026, 000027 առևտրային չեկերի լուսապատճեններով, 06.10.2008թ. դուրս գրված հ. 0027164 <<Դրամարկղային չեկ> ու՛, համաձայն որի Արսեն Սարգսյանը <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 428.000 դրամ, 07.10.2008թ. դուրս գրված հ. 0027165 <<Դրամարկղային չեկ>>-ու՛ համաձայն որի Արսեն Սարգսյանը «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 1.013.000 դրամ, 10.10.2008թ. դուրս գրված հ. 0027168 <<Դրամարկղային չեկ>>-ու՛ համաձայն որի Արսեն Սարգսյանը <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 2.853.000 դրամ, 21.10.2008թ. դուրս գրված հ. 0027173 <<Դրամարկղային չեկ>>-ու՛ համաձայն որի Արսեն Սարգսյանը <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում գործող 2224090 հաշվեհամարից ստացել է 5.694.000 դրամ, <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերության և <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության միջև 23.06.2008թ. կնքված <<Առևտրի և սպասարկման սրահներում բանկային քարտերը՝ որպես վճարման միջոց, ընդունելու վերաբերյալ>> պայմանագրով, <<MasterCard>> համակարգից ստացված բողոքարկումների քաղվածքով, <<Գլոբալ Մոբայլ>> առևտրի սրահի (խանութի) <<մուտքերի>> տետրով, որում առկա են մուտքագրված ապրանքների վերաբերյալ գրառումներ, <<Արմենիան Քարդ>> ՓԲ ընկերության համակարգում գրանցված առևտրային կետերում արտասահմանյան <<MasterCard>> քարտերով կատարված կասկածելի, այդ թվում՝ <<Գլոբալ Մոբայլ>> առևտրի սրահում (խանութում) տեղադրված Pos-տերմինալով իրականացված, գործարքների ցանկով: <<Գլոբալ Մոբայլ>> առևտրի սրահից (խանութից) վաճառված ապրանքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տետրով: <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության հ. 205002224090-1001 հաշվի՝ 01.09.2008թ-ից մինչև 01.01.2009թ. ներառյալ ընկած ժամանակահատվածի շարժի վերաբերյալ քաղվածքով: 04.05.2009թ. <<Ջննման արձանագրությամբ>>՝ համաձայն որի գնվել են <<Գլոբալ Մոբայլ>> առևտրի սրահում տեղադրված POS-տերմինալի առևտրային չեկերը, <<Առգրավում և գնում կատարելու մասին>> 25.02.2009թ. արձանագրությամբ, 07.05.2009թ. <<Ջննման արձանագրությամբ>>՝ համաձայն որի կատարվել է <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերությանը պատկանող պարզեցված հարկ վճարողի եկամուտների և ծախսերի հաշվառման գրքի ու թումանյան 27 հասցեում գտնվող <<Գլոբալ Մոբայլ>> առևտրի սրահի մուտքերի տետրի գնում: 04.05.2009թ. <<Ջննման արձանագրությամբ>>՝ համաձայն որի կատարվել է <<Արմենիան Քարդ>> ՓԲ ընկերությունից ստացված, նշված ընկերության համակարգում գրանցված առևտրային կետերում արտասահմանյան <<MasterCard>> քարտերով կատարված

կասկածելի գործարքների ցանկի գնում, 04.05.2009թ. <<Ձննման արձանագրությամբ>>՝ համաձայն որի կատարվել է Ա.Սարգսյանի կողմից քննությանը ներկայացված՝ <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված, <<Էյթի Էյ մոբայլ>> ՍՊ ընկերությանը պատկանող բանկային հաշվեհամարի առ 01.09.2008թ. ներառյալ 01.01.2009թ. շարժի վերաբերյալ քաղվածքի և <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերության կողմից թիվ 946 գրությամբ քննությանը տրամադրված «MasterCard» համակարգից ստացված բողոքարկումների քաղվածքի գնում: 04.05.2009թ. <<Ձննման արձանագրությամբ>>՝ համաձայն որի կատարվել է Ա.Սարգսյանի կողմից ներկայացված Թումանյան 27 հասցեում գտնվող <<Գլոբալ Մոբայլ>> խանութից վաճառված ապրանքների մասին տեղեկություններ պարունակող տետրի գնում: 04.05.2009թ. <<Ձննման արձանագրությամբ>>՝ համաձայն որի կատարվել է Ա.Սարգսյանի կողմից քննությանը ներկայացված <<Առևտրի և սպասարկման սրահներում բանկային քարտերը՝ որպես վճարման միջոց, ընդունելու վերաբերյալ>> պայմանագրի, նշված պայմանագրի հավելված համարվող «Վճարային համակարգի սպասարկման ենթակառուցվածքում քարտեր սպասարկող անձի» ուղեցույց ձեռնարկի ու <<Հավաստագրման կողերի աղյուսակի>> գնում: 18.04.2009թ. <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունից ստացված թիվ 946 գրությամբ, համաձայն որի ըստ <<MasterCard>> համակարգի կանոնների, հետզանձումային պահանջի ներկայացման առավելագույն ժամկետը 540 օր է և այդ ժամկետում <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությանը կարող են ներկայացվել այլ ետզանձումային պահանջներ: Ղատախաշվապահական փորձաքննության 31.03.2009թ. հ. 09-0361 եզրակացությամբ, համաձայն որի՝ 2008 թվականի հոկտեմբեր 17-ին և 25-ին կատարված գործարքները փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ են ստացել: Նշված գործարքներն իբրև ապրանքի վաճառք ներկայացնելը, ըստ էության նպատակաուղղված են եղել <<Էյ Թի Էյ մոբայլ>> ՍՊ ընկերության վաճառարահում տեղադրված բանկային քարտերի սպասարկման POS-տերմինալի միջոցով ԱՄՆ <<MBNA AMERICA BANK>> ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից 5892000 դրամ գումարի և <<MBNA AMERICA BANK>> ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից 6916000 դրամ գումարի գողացման փաստի քողարկմանը, այսինքն՝ անօրինական ճանապարհով ստացված եկամտի իրական բնույթի և ծագման աղբյուրի խեղաթյուրման միջոցով՝ ընդհանուր առմամբ՝ 12808000 դրամ գումարի եկամտի օրինականացմանը: Հաշվապահական հաշվառման դրույթների և նախաքննությամբ ձեռք բերված տվյալների տեսանկյունից, նշված գործարքները, ըստ էության բովանդակային առումով անարժանահավատ են: Այդ գործարքների հետևանքով, «Էյթի Էյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից ուղղակի վնաս է պատճառվել ԱՄՆ-ի «MBNA AMERICA BANK» բանկի թվով 2 (երկու) հաճախորդներին համապատասխանաբար՝ 5892000 դրամ և 6916000 դրամ գումարի չափով, իսկ անուղղակի կերպով՝ <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությանը՝ 12808000 դրամ գումարի չափով:

Ղատախաշվապահական փորձաքննության 05.05.2009թ. հ. 09-0779 եզրակացությամբ, ըստ որի՝ 2008 թվականի սեպտեմբերի 29-ին, հոկտեմբերի 3-ին և 8-ին կատարված գործարքները փաստաթղթավորվել և հաշվապահական ձևակերպումներ են ստացել: Նման պայմաններում, նշված գործարքներն իբրև ապրանքի վաճառք ներկայացնելն, ըստ էության նպատակաուղղված են եղել <<Էյթի Էյ մոբայլ>> ՍՊ ընկերության վաճառարահում տեղադրված բանկային քարտերի սպասարկման POS-տերմինալի միջոցով ԱՄՆ «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427000 դրամ, «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից

982000 դրամ և «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից 2946000 դրամ գումարների գողացման փաստի քողարկմանն, այսինքն՝ անօրինական ճանապարհով ստացված եկամտի իրական բնույթի և ծագման աղբյուրի խեղաթյուրման միջոցով՝ ընդհանուր առմամբ՝ 4355000 դրամ գումարի եկամտի օրինականացմանը և հաշվապահական հաշվառման դրույթների և նախաքննությամբ ձեռք բերված տվյալների տեսանկյունից նշված գործարքներն, ըստ էության բովանդակային առումով անարժանահավատ են: Այդ գործարքների հետևանքով, <<էյթի էյ մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից ուղղակի վնաս է պատճառվել ԱՄՆ-ի <<MBNA AMERICA BANK>> բանկի թվով 2 (երկու) հաճախորդներին համապատասխանաբար՝ 982000 դրամ, 2946000 դրամ գումարի և <<CHASE MANHATTAN BANK USA NA>> ամերիկյան կազմակերպության 1 (մեկ) հաճախորդին 427000 դրամ գումարի չափով, իսկ անուղղակի կերպով՝ <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությանը՝ 4355000 դրամ գումարի չափով:

Վերաքննիչ դատարանն անդրադառնալով պաշտպանի վերաքննիչ բողոքում նշված՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու, պահանջին, հարկ է համարում արձանագրել, որ << քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է. եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելիս, հանգում է այն եզրակացության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Նշված հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում, դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության ստիճանով և բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել:

<< քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Դատարանը նման հետևության հանգում է միայն գոյություն ունեցող տվյալների օբյեկտիվ վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:

<< քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածների համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և

պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներով:
ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը,
ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել
հանցագործությունները:

Պաշտպանի վերաքննիչ բողոքի առկայության պայմանում,
քննության առնելով ամբաստանյալ Արսեն Սարգսյանի նկատմամբ
նշանակված պատժի հարցը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ
ընդհանուր իրավասության դատարանը հաշվի է առել վերջինիս
կատարած հանցագործության բնույթը և հասարակական
վտանգավորության աստիճանը, դատական ակտում շարադրված
ամբաստանյալի անձը բնութագրող ու պատասխանատվությունը և
պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև
պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների
բացակայությունը, հանգել է ճիշտ հետևության և նրա նկատմամբ՝
նշանակել է համաչափ պատիժ:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ իրեն առաջադրված
մեղադրանքում ամբաստանյալի մեղավոր չճանաչելը դեռևս չի
նշանակում նրա կողմից հանցագործությունը չկատարելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ
մասը սահմանում է. քրեական հետապնդումը ենթակա է
դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝
կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի
մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե
սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր
հնարավորությունները, որպիսի հիմքերը բացակայում են սույն
քրեական գործով:

Վերաքննիչ դատարանն անդրադառնալով տուժողի ներկայացուցչի
վերաքննիչ բողոքին հարկ է համարում արձանագրել, որ այն անհիմն
է չի բխում գործով ձեռք բերված դատաքննությամբ հետազոտված և
դատական ակտում շարադրված ապացույցներից, մասնավորապես.

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ գույքի
բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող
գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝
ի սեփականությունն պետության: Գույքի բռնագրավման չափը
դատարանը որոշում է՝ նկատի ունենալով հանցագործությամբ
հասցված գույքային վնասի, ինչպես նաև հանցավոր ճանապարհով
ձեռք բերված գույքի չափը: Գույքի բռնագրավման չափը չի կարող
զերազանցել հանցագործությամբ հասցված վնասի կամ հանցավոր
ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը: Գույքի բռնագրավումը
կարող է նշանակվել շահադիտական դրդումներով կատարված
ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար սույն օրենսգրքի
Հատուկ մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ սույն
հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով նախատեսված դեպքերի:
Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր
ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն
օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների
կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ
ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից
ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ
արարքների կատարման համար օգտագործված կամ
օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր
ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ
գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ
գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ
որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց
կողմից տիրապետելու հանգամանքից:

Վերաքննիչ դատարանը վերլուծելով և գնահատելով քրեական
գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված
ապացույցներն իրենց համակցության մեջ հանգում է հետևության, որ
ամբաստանյալին մեղսագրվող արարքը ճիշտ է որակված և
ներկայացված վերաքննիչ բողոքներում նշված

| | |
|--|---|
| | <p>պատճառաբանությունները հիմք չեն կարող հանդիսանալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. ապրիլի 14-ի դատավճիռը բեկանելու և ամբաստանյալի նկատմամբ արդարացման դատականակտ կայացնելու, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար: ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ, 390-րդ, 393-394-րդ, 402-րդ հոդվածներով,</p> <p>Ո Ր Ո Շ Ե Ց</p> <p>Ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. ապրիլի 14-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ, պաշտպանի և տուժողի վերաքննիչ բողոքները մերժել: Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ ստորագրություն ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ստորագրություններ</p> <p>Իսկականի հետ ձիշտ է :</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Մ.ՈՒՇԱՆՅԱՆ</p> |
| Դատական ակտի ամսաթիվը: | 14-10-2010 |
| Ամսաթիվ: | 16-11-2010 |
| Էջերի քանակը: | Քրեական գործը 4(չորս) հատորից, համապատասխանաբար բաղկացած՝ <241>, <260>, <163>, <231> թերթերից: |
| Գործին կից նյութեր: Այլ նշումներ: | Արսեն Սարգսյանի AB 0313004 անձնագիրը: |
| Գործն ուղարկվել է: | 16-11-2010 |
| Էջերի քանակը: | 241, 260, 163, 213 թերթից |
| Գործին կից նյութերը: | |
| Ուր: | Վճռաբեկ |
| Գրության համարը: | Ե-14777/10 |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 03-12-2010 |
| Ամսաթիվ: | 11-01-2012 |
| Ամսաթիվ: | 11-01-2012 |
| Նախագահող դատավոր | |

| | |
|-----------------------------------|-----------------------------|
| Դատարանի անվանում: | Քրեական և զինվորական վերաք. |
| Դատավորի անուն: | Սերգեյ Չիչոյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Քրեական և զինվորական վերաք. |
| Դատավորի անուն: | |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 11-01-2012 |
| Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց: | չկա |
| Ամսաթիվ: | 16-01-2012 |
| Երբ: | 26-01-2012 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | 16-01-2012 |
| Ժամ: | 12:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 2 |
| Նիստը: | Կայացվել է |
| Պատճառը: | |
| Երբ: | 15-02-2012 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | 27-01-2012 |
| Ժամ: | 14:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 2 |
| Նիստը: | |
| Պատճառը: | |
| Երբ: | 29-02-2012 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | 16-02-2012 |
| Ժամ: | 14:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 2 |
| Նիստը: | Կայացվել է |
| Պատճառը: | |
| Երբ: | 07-03-2012 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | |
| Ժամ: | 14:00 |
| Այլ նշումներ: | |
| Նիստերի դահլիճի համարը: | 2 |
| Նիստը: | Կայացվել է |

| | |
|---|--|
| Պատճառը: | |
| Ամսաթիվ: | 07-03-2012 |
| Ստորադաս դատարանի դատական ակտը բեկանվել է: | Դատական ակտը բեկանվել է մասնակի եվ փոփոխվել |
| Ամբաստանյալ | |
| Անուն | Արսեն |
| Ազգանուն | Սարգսյան |
| Հայրանուն | Հայկի |
| Հասցե | ք.Երևան, Գուսան Շերամի փողոց, 77-րդ շենք, բնակարան 41 |
| Սեռ | Արական |
| Ծննդյան ամսաթիվ | 15-02-1980 |
| Քր. դատ. օր. հոդված | |
| Հոդված | 376-1, 385, 386, 390, 391, 393-395, 402, 418 |
| Քր. օր. հոդված | |
| Հոդված | 177, 190 Մաս 3, 3 Կետ 1, 1 |
| Այլ նշումներ: | |
| Դատական ակտ: | <p>Գործ ԵԿԴ/0090/01/09</p> <p>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>07 մարտի 2012թ. ք.Երևան</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ս. ԶԻՉՈՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Ե. ԴԱՐԲԻՆՅԱՆ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ</p> <p>ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ Տ. ՀԱԿՈԲՅԱՆԻ</p> <p>ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ</p> <p>ՏՈՒԺՈՂ <<ԻՆԵԿՈՐՔԱՆԿ>> ՓԲԸ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ</p> <p>դռնբաց դատական նիստում, վճռաբեկ վարույթի կանոններով, քննության առնելով տուժող <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության վերաքննիչ բողոքը՝ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռի դեմ</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը.</p> <p>2009 թվականի փետրվարի 02-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական</p> |

վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով հարուցվել է թիվ 58201209 քրեական գործը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 12.808.000 ՀՀ դրամի գողություն կատարելու, հանցավոր ճանապարհով ստացված նշված գումարից խոշոր չափի՝ 5.892.000 ՀՀ դրամը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ օրինականացնելու /լվանալու/, ինչպես նաև հափշտակված գումարի տարբերություն կազմող 6.916.000 ՀՀ դրամն օրինականացնելու /լվանալու/ փորձ կատարելու դեպքով:

2009 թվականի փետրվարի 10-ին Արսեն Հայկի Սարգսյանը ձերբակալվել է:

2009 թվականի փետրվարի 12-ին Արսեն Հայկի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ մեղադրյալ Արսեն Հայկի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորում՝ 2/երկու/ ամիս ժամանակով՝ կալանքի սկիզբը հաշվելով 2009 թվականի փետրվարի 10-ից:

2009 թվականի մայիսի 07-ին Արսեն Հայկի Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի մայիսի 18-ին թիվ 58201209 քրեական գործի վարույթից՝ չչարգված անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով կեղծ վճարային քարտեր իրացնելու մասով, հարուցվել է նոր քրեական գործ, այն առանձնացվել է առանձին վարույթ և նախաքննությունը կատարվել է թիվ 58206209 համարով:

2009 թվականի մայիսի 21-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արսեն Հայկի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով Արսեն Հայկի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով՝ 17.163.000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7/յոթ/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Եյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Եյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից՝ որպես վնասի հատուցում, «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հիմնական պատիժները մասնակի, իսկ լրացուցիչ պատիժները լրիվ գումարելու միջոցով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժին

մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժից 2/երկու/ տարին և վերջնական պատիժ է նշանակվել՝ ազատազրկում 9/ինը/ տարի ժամկետով՝ 17.163.000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Հինեկոբանկ» ՓԲ ընկերությունում «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից՝ որպես վնասի հատուցում, «Հինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2009 թվականի փետրվարի 10-ից: Արսեն Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճռվել է նաև իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պահել գործի հետ:

Ա.Սարգսյանի գույքի վրա դրված կալանքը թողնվել է անփոփոխ:

Ղատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը և ամբաստանյալ Արսեն Սարգսյանի պաշտպան Կրոմվել Գրիգորյանը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանի և տուժողի վերաքննիչ բողոքները մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը և ամբաստանյալ Արսեն Սարգսյանի պաշտպան Կրոմվել Գրիգորյանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ ամբաստանյալ Արսեն Սարգսյանի պաշտպան Կրոմվել Գրիգորյանի վճռաբեկ բողոքը մերժվել է: Ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2011 թվականի մարտի 02-ին տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ կրկին վճռաբեկ բողոք է բերել:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 31-ի որոշմամբ տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

2011 թվականի օգոստոսի 03-ին տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել՝ նոր հանգամանքով:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ տուժող «Հինեկոբանկ» փակ բաժնետիրական

ընկերության վճռաբեկ բողոքը բավարարվել է: Վերանայվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը: Դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման՝ «Ինտելիգենցի» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը բեկանվել է գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Քրեական գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է մուտք եղել 2012 թվականի հունվարի 11-ին:
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 16-ի որոշմամբ տուժող «Ինտելիգենցի» փակ բաժնետիրական ընկերության վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և քրեական գործը նշանակվել է քննության վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով:
Վերաքննիչ բողոքի կապակցությամբ գրավոր պատասխան չի ստացվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արսեն Հայկի Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության միակ հիմնադիր և Երևանի Թումանյան 27 հասցեում գտնվող «Գլոբալ մոբայլ» վաճառարահույժ իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր՝ միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված POS -տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում նշված սարքը «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության և «Ինտելիգենցի» ՓԲ ընկերության միջև 2008 թվականի հունիսի 23-ին կնքված պայմանագրի համաձայն՝ տեղադրվել է վաճառարահույժ: Այնուհետև Ա.Սարգսյանը քննությամբ չպարզված անձանցից ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում այդ քարտերը գործածելով նշված POS-տերմինալում 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության՝ «Ինտելիգենցի» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարին՝ միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառարահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 ՀՀ դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այսինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները:

Նշված գումարի մի մասը Ա.Սարգսյանը ելքագրել է «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարից և տնօրինել իր հայեցողությամբ:

Մասնավորապես, 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Արսեն Սարգսյանը, իբրև վաճառված ապրանքի դիմաց վճարում, «Գլոբալ մոբայլ» վաճառարահույժ տեղադրված POS-տերմինալի միջոցով 5466264001383577 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427.000 դրամի համարժեք գումարը փոխանցել է «Ինտելիգենցի» ՓԲ ընկերությունում բացված «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:

2008 թվականի հոկտեմբերի 03-ին, նույն եղանակով 5490998311026349 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից գողացված 982.000 դրամի չափով գումարը

փոխանցել է <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:
2008 թվականի հոկտեմբերի 08-ին, նույն եղանակով 549099370256355 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 3 գործարքների արդյունքում <<MBNA AMERICA BANK>> ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից գողացված 2.946.000 դրամի չափով գումարը փոխանցել է <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:
2008 թվականի հոկտեմբերի 17-ին, նույն եղանակով 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 6 գործարքների արդյունքում <<MBNA AMERICA BANK>> ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից գողացված 5.892.000 դրամի չափով գումարը փոխանցել է <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության հաշվեհամարին և այն անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է:
2008 թվականի հոկտեմբերի 25-ին, նույն եղանակով 5490990089627168 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 7 գործարքների արդյունքում <<MBNA AMERICA BANK>> ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից գողացված 6.916.000 դրամի չափով գումարը փոխանցել է <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունում բացված <<Էյթիէյ մոբայլ>> ՍՊ ընկերության հաշվեհամարին, սակայն գողոնը չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:
Տուժողը վերաքննիչ բողոքում նշել է, որ սույն գործի դատաքննության փուլում իր փաստացի կրած վնասը հատուցված լինելու հիմքով քաղաքացիական հայցի պահանջ չի ներկայացրել: Մինչդեռ <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդսացող անակցեպտ կարգով գանձված գումարները, որոնք վերականգնվել էին մինչև գործի դատաքննությունը, դատարանը համարել է որպես բռնագրավման ենթակա <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունից՝ վերջինիս կրկին անգամ թողնելով տուժողի կարգավիճակում խախտելով <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքը:
Որպես վնասի հատուցում <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վճարված գումարը հանդիսացել է <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը, որն օրինական հիմքով տիրապետվում և օգտագործվում էր <<Ինեկոբանկի>> կողմից:
Սույն քրեական գործով <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունը՝ հանդիսանալով դատավճռի համաձայն՝ բռնագրավման ենթակա 6.585.294 ՀՀ դրամի սեփականատեր և ըստ էության բարեխիղճ երրորդ անձ, զրկվում է իր սեփականությունից դատավճռի բռնագրավման պահանջը կատարելու դեպքում:
Փաստորեն, բռնագրավելով <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունից հատուցված վնասի գումարը՝ խախտվում է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ բռնագրավման ենթակա չէ բարեխիղճ երրորդ անձի գույքը:
Վերը նկարագրված պայմաններում, երբ <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող դրամական միջոցների անակցեպտ գանձումից ԱՄՆ-ի բանկի

հաճախորդ-քարտապանի վնասը վերականգնվել է, և երբ արդեն առկա չէ նշված քարտապանի սեփականության իրավունքի խախտում, <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունից դատավճռով սահմանված փոխհատուցված գումարի բռնագրավմամբ դատարանը թույլ է տվել << քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, խախտվում է <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության՝ որպես իրավաբանական անձի, իրավունքը՝ մասնավորապես՝ 6.585.294 << դրամի նկատմամբ սեփականության իրավունքը:

Սույն գործով առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր բռնագրավման ենթակա գումարի սեփականատեր <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության անբարեխիղճ լինելու կամ այդ գումարը ոչ օրինական հիմքերով տիրապետելու վերաբերյալ:

<<Էյթիեյ մոբայլ>> ՍՊԸ կողմից զեղծարար քարտով 17.10.2008թ. կատարված գործարքների հետևանքով <<MasterCard>> համակարգն անակցեպտ կարգով <<Ինեկոբանկ>> ՓԲԸ թղթակցակին հաշվից գանձել է ԱՄՆ-ի <<MBNA AMERICA BANK USA NA>> բանկի հաճախորդ-քարտապանին պատճառված վնասը, քանի որ <<MasterCard>> համակարգի կանոնների համաձայն՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Pos-Տերմինալներով կատարված չհավաստագրված գործարքներից պատճառված վնասը մինչև վնաս պատճառողին պարգելը, պետք է հատուցվի <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից: Դրանից հետո <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության հետադարձ պահանջի բավարարման նպատակով <<Էյթիեյ մոբայլ>> ՍՊԸ տնօրենի կողմից 28.10.2008թ. գրվել է համապատասխան պարտավորագիր, որի պայմաններին համապատասխան էլ մեկամսյա ժամկետում վերականգնվել է <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության վնասը: Այսինքն <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վերադարձվել է իր սեփականությունը հանդիսացած գույքը՝ տվյալ դեպքում բռնագրավման ենթակա գումարը:

Բողոքարկվող դատավճռով դատարանը գրկել է <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանն իր սեփականությունից՝ խախտելով << Սահմանադրության և Եվրոպական կոնվենցիայի սեփականության պաշտպանության վերաբերյալ համապատասխան հոդվածները: Դատարանը խախտելով նյութական և դատավարական իրավունքի պահանջները՝ ոչ միայն չի վերականգնել <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության խախտված սեփականության իրավունքը, այլ նաև գրկել է սեփականությունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել /չեղյալ համարել/ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավճիռը՝ որպես վնասի հատուցում <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վճարված 6.585.294 << դրամի բռնագրավման մատով:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ դատարանը քննության առնելով վերաքննիչ բողոքը՝ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, լսելով բողոքում ներկայացված հետևությունները հիմնավորելու մասին տուժողի ներկայացուցչի ելույթը, ամբաստանյալի պատասխանը, ինչպես նաև վերլուծելով գործի նյութերը, դրանք գնահատելով իրենց համակցությամբ, հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է բավարարել՝ հետևյալ պատճառաբանությամբ. << քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքներն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել:

Դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքով տուժող <<Ինտեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավճիռը՝ որպես վնասի հատուցում <<Ինտեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավման մասով:

Ամբաստանյալ Արսեն Սարգսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքները կատարելը և նրա մեղքը որևէ մասնակցի կողմից չի վիճարկվում, չի վիճարկվում նաև առաջին ատյանի դատարանի կողմից դատավճռով հաստատված ճանաչված որևէ փաստական հանգամանք, այդ իսկ պատճառով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի հիմքով վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ հաստատված ճանաչված փաստական հանգամանքներն ընդունում է որպես հիմք, նրա արարքին դատարանի կողմից տրված քրեաիրավական գնահատականը քննության առարկա չի դարձնում, այլ քննության առարկա է դարձնում նշանակված լրացուցիչ պատժի՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավման՝ տարածված նաև Ա.Սարգսյանի միջոցով <<Եյթիեյ մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում <<Ինտեկոբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա, հիմնավորվածությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշման եզրափակիչ մասում սահմանել է. <<<< քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ <<Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից>> դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի/օրինական տիրապետողի/ գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր>>:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը քննության առնելով ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հակասահմանադրական ճանաչումն ըստ էության գործի ելքի վրա ազդելու հարցը՝ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

<<(...)><< Սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշումը սույն գործով նոր հանգամանք է, քանի որ կիրառվել է ՍԴՈ-983 որոշման եզրափակիչ մասում մասնակի հակասահմանադրական ճանաչված իրավանորմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արսեն Հայկի Սարգսյանը վերականգնել է տուժող՝ <<Ինտեկոբանկ>> ՓԲ ընկերությանը պատճառված վնասը, սակայն Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով որոշել է բռնագրավումը տարածել նաև Ա.Սարգսյանի միջոցով <<Եյթիեյ մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում <<Ինտեկոբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի

վրա:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-983 որոշման լույսի ներքո գնահատելով բողոքարկված դատական ակտի իրավաչափության հարցը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ տուժողի օրինական շահերին վերաբերող հարցի՝ տուժողին վճարված 6.585.294 ՀՀ դրամի իրավական ճակատագրի հարցի լուծումը բացառապես պայմանավորված է եղել ՍԴՈ-983 որոշմամբ՝ վերաբերելի մասով հակասահմանադրական ճանաչված ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ:

Մասնավորապես, սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման արդյունքում չի երաշխավորվել տուժող <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերության գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանությունը:(...)>>:

Վերը շարադրված իրավական դիրքորոշման հիման վրա վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանը քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ՝ գույքի բռնագրավում, նշանակելու նպատակահարմարության հարցը, գտել է, որ այն պետք է նշանակել՝ հաշվի առնելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված լրացուցիչ պատիժը՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավումը տարածել է նաև Ա.Սարգսյանի միջոցով <<Էյթիեյ մոբայլ>> ՍՊ ընկերության կողմից՝ որպես վնասի հատուցում, <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա, դրանով իսկ չի երաշխավորվել տուժող <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերության գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանությունը: Այդ իսկ պատճառով վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010թ. դատավճիռը՝ <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով, պետք է բեկանել և փոփոխել՝ <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավումը վերացնել և այն թողնել վերջինիս՝ ի տնօրինություն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3761-րդ, 385-րդ, 386-րդ, 390-րդ, 391-րդ, 393-395-րդ, 402-րդ, 418-րդ հոդվածներով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Տուժող <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի՝ Արսեն Հայկի Սարգսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ Ա.Սարգսյանի միջոցով <<Էյթիեյ մոբայլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից որպես վնասի հատուցում <<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավման մասով, բեկանել և փոփոխել:

<<Ինեկոբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը որպես վնասի հատուցում վճարված 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավումը վերացնել և այն թողնել վերջինիս՝ ի տնօրինություն: Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝

| | |
|---------------------------------------|---|
| | <p>հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ</p> <p>Իսկականի հետ ձիշտ է՝</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԶԻԶՈՅԱՆ</p> |
| Դատական ակտի ամսաթիվը: | 07-03-2012 |
| Ամսաթիվ: | 13-04-2012 |
| Էջերի քանակը: | Բաղկացած է 5 հատորից. հատոր 1-ին 241 թերթ, հատոր 2-րդ 260 թերթ, հատոր 3-րդ 163 թերթ, հատոր 4-րդ 369 թերթ, հատոր 5-րդ 99 թերթ |
| Գործին կից նյութեր: | |
| Այլ նշումներ: | |
| Գործն ուղարկվել է: | 13-04-2012 |
| Էջերի քանակը: | 241, 260, 163, 369, 99 թերթ: |
| Գործին կից նյութերը: | |
| Ուր: | Կենտրոն և Նորք-Մարաշ |
| Գրության համարը: | Ե-4978/12 |
| Այլ նշումներ: | |
| Դատական Գործ N: ԵԿԴ/0090/01/09 | |
| Ամսաթիվ: | 11-11-2010 |
| Բողոք բերող անձինք: | Տուժող |
| Բողոք բերող անձինք: | Ամբաստանյալի պաշտպան |
| Բողոք բերող անձինք | |
| Անուն | Ա |
| Ազգանուն | Բալոյան |
| Հասցե | Ա.Բալոյան «Ինտելոբանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝ ք.Երեվան, Թումանյան 17 |
| Այլ | մուտք են եղել 2 վճռաբեկ բողոքներ՝ 11.11.2010թ. եվ 15.11.2010թ. |
| Բողոք բերող անձինք | |
| Անուն | Կրոմվել |
| Ազգանուն | Գրիգորյան |
| Հասցե | ք.Երեվան, Տիգրան Մեծի 45/25, ամբաստանյալ՝ ք.Երեվան, Գուսան Շերամի փ. շենք, բն. 41 |
| Այլ | ամբաստանյալ՝ Արսեն Հայկի Սարգսյան |
| Հավատարմագրված փաստաթան | |
| Անուն | |
| Ազգանուն | |

| | |
|--------------------------|---|
| | Հասցե |
| Ղատապարտյալ | |
| | Անուն |
| | Ազգանուն |
| | Հասցե |
| | Չափահաս: Այո |
| | Պատասխանի ստացման ամսաթիվը: |
| | Պատասխանի բովանդակությունը: |
| | |
| | Գործի առաքման ամսաթիվը: 16-11-2010 |
| | Գրության համարը: ԴԴ-8-Ե-14777/10 |
| | Գործի ստացման ամսաթիվը: 22-11-2010 |
| | Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/: 4 հատոր, 1 անձնագիր |
| Ղատապարտյալ | |
| | Անուն |
| | Ազգանուն |
| | Հասցե |
| | Գործի համարը: ԵԿԴ/0090/01/09 |
| | Գործը ստացվել է: Քրեական և զինվորական վերաք. |
| | Գործը ստացվել է: |
| | Գործը ստացվել է: |
| | Պատասխանատվության ենթարկվածների թիվը: 1 |
| | |
| | Ամսաթիվ: 22-11-2010 |
| Նախագահող դատավոր | |
| | Դատարանի անվանում: Վճռաբեկ |
| | Դատավորի անուն: Դավիթ Ջաքարի Ավետիսյան |
| Դատավոր | |
| | Դատարանի անվանում: Վճռաբեկ |
| | Դատավորի անուն: Արթուր Վլադիմիրի Պողոսյան |
| | Այլ նշումներ: |
| | |
| | Ամսաթիվ: 17-12-2010 |
| | Որոշման բովանդակությունը: Ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժող «Ինտեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը վերադարձնել: |
| | |
| | Ամսաթիվ: 20-12-2010 |
| | Այլ նշումներ: |
| | |
| | Ամսաթիվ: 15-11-2010 |

| | |
|--|---|
| Բողոք բերող անձ | |
| Անուն | Կրոմվել |
| Ազգանուն | Գրիգորյան |
| Հասցե | Երեվան, Տիգրան Մեծի 45/25 |
| Այլ | ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյան |
| Հավատարմագրված փաստաթան | |
| Անուն | . |
| Ազգանուն | . |
| Հասցե | . |
| Պետական տուրք: | . |
| Պատասխանի ստացման ամսաթիվը: | |
| Պատասխան բերող անձը | |
| Անուն | . |
| Ազգանուն | . |
| Հասցե | . |
| Բողոքարկվող դատական ակտը: | ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 14.10.2010թ. որոշման դեմ |
| Գործի համար: | ԵԿԴ/0090/01/09 |
| Ում կողմից է բերվել բողոքը: | Ամբաստանյալի պաշտպան |
| Գործի առաքման ամսաթիվը: | 16-11-2010 |
| Գրության համարը: | Ե-14777/10 |
| Գործի ստացման ամսաթիվը: | 22-11-2010 |
| Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/: | 4 հատոր, 1 անձնագիր |
| Դատապարտյալ | |
| Անուն | . |
| Ազգանուն | . |
| Հասցե | . |
| Գործի համարը: | ԵԿԴ/0090/01/09 |
| Գործը ստացվել է: | Քրեական և զինվորական վերաք. |
| Գործը ստացվել է: | |
| Գործը ստացվել է: | |
| Պատասխանատվության ենթարկվածների թիվը: | 1 |
| Ամսաթիվ: | 22-11-2010 |
| Նախագահող դատավոր | |
| Դատարանի անվանում: | Վճռաբեկ |
| Դատավորի անուն: | Դավիթ Զաքարի Ավետիսյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Վճռաբեկ |
| Դատավորի անուն: | Արթուր Վլադիմիրի Պողոսյան |
| Այլ նշումներ: | 02.03.2011թ. տուժող «Ինտելիգենցի» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բալոյանը կրկին բերել է վճռաբեկ բողոք, որը 31.03.2011թ. որոշմամբ թողնվել է առանց քննության: |

ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

ԵԿԴ/0090/01/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆ ԱՌԱՅ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 մարտի 2011 թվական ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՂԱՆՅԱՆԻ

քննարկելով դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժող «Ինելկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, պարզեց, որ այն պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ:

Քրեական գործի ուսումնասիրությունից երևում է, որ տուժող «Ինելկոբանկ» ՓԲԸ-ն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ սույն բողոքում նշված հիմքերով վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ վերադարձվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

Այսինքն՝ տուժող «Ինելկոբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքում նշված հիմքերով նույն գործով Վճռաբեկ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 17-ին արդեն իսկ որոշում է կայացրել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Բողոքը թողնվում է առանց քննության նաև այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել»:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը կարող է բերվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, (...)»:

Տուժող «Ինելկոբանկ» ՓԲԸ-ն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ կրկին վճռաբեկ բողոք է բերել 2011 թվականի մարտի 2-ին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը ժամկետանց է, վճռաբեկ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող «Ինելկոբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության:

| | |
|---|--|
| | <p>Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը</p> <p>Ո Ր Ո Շ Ե Ց</p> <p>Դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժող «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:</p> <p>Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ Ս.ՕՀԱՆՅԱՆ</p> |
| <p>Ամսաթիվ:</p> | <p>21-12-2010</p> |
| <p>Որոշման առաքման ամսաթիվը:</p> | <p>23-12-2010</p> |
| <p>Երբ:</p> | <p>24-02-2011</p> |
| <p>Ուղարկվել է ծանուցագիր:</p> | <p>18-02-2011</p> |
| <p>Ժամ:</p> | <p>11:00</p> |
| <p>Այլ նշումներ:</p> | |
| <p>Նիստերի դահլիճի համարը:</p> | <p>2</p> |
| <p>Անվտանգ թողնված դատական ակտը:</p> | <p>Չի պատճառաբանվել</p> |
| <p>Ամսաթիվ:</p> | <p>24-02-2011</p> |
| <p>Հողված</p> | |
| <p>Հողված</p> | <p>21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ</p> |
| <p>Այլ նշումներ:</p> | |
| <p>Դատական ակտ:</p> | <p>ԵԿԴ/0090/01/09</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի որոշում Քրեական գործ թիվ ԵԿԴ/0090/01/09 Նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան</p> |

Ղատավորներ՝ Ա.Դանիելյան
Մ.Արղամանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 24-ին Երևան քաղաքում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,
Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի փետրվարի 2-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 58201209 քրեական գործը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի՝ 12.808.000 ՀՀ դրամի գողություն կատարելու, ապա հանցավոր ճանապարհով ստացված նշված գումարից խոշոր չափի 5.892.000 ՀՀ դրամը օրինականացնելու, ինչպես նաև հափշտակված գումարի տարբերություն կազմող 6.916.000 ՀՀ դրամն օրինականացնելու փորձ կատարելու դեպքերի առթիվ:

2009 թվականի փետրվարի 10-ին Արսեն Հայկի Սարգսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2009 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Ա.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2009 թվականի մայիսի 7-ին Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի մայիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով Ա.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական

օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Էյթիեյ մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

3. Ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները

5. Ա.Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի միակ հիմնադիր և Երևանի թուրմանյան 27 հասցեում նշված կազմակերպության կողմից վարձակալված «Գլոբալ մոբայլ» վաճառատնահում իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր՝ միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված Pos-տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում նշված սարքը «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի միջև 2008 թվականի հունիսի 23-ին կնքված պայմանագրի համաձայն տեղադրվել է վաճառատնահում: Այնուհետև Ա.Սարգսյանը քննությամբ չչարգված անձանցից ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում այդ քարտերը գործածելով նշված Pos-տերմինալում 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված հաշվեհամարին՝ միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառատնահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 ՀՀ դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այսինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները: Նշված գումարի մի մասը

Ա.Սարգսյանը ելքագրել է «Էյթիէյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարից և տնօրինել իր հայեցողությամբ:

Մասնավորապես, 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Ա.Սարգսյանն իբրև վաճառված ապրանքի դիմաց վճարում «Չլոբալ մոբայլ» վաճառատարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով 5466264001383577 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «Էյթիէյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին նույն եղանակով 5490998311026349 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից գողացված 982.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «Էյթիէյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին նույն եղանակով 5490999370256355 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 3 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից գողացված 2.946.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «Էյթիէյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 17-ին նույն եղանակով 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 6 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից գողացված 5.892.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «Էյթիէյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 25-ին նույն եղանակով 5490990089627168 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 7 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից գողացված 6.916.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «Էյթիէյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին, սակայն գողոնը չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Ա.Սարգսյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Մասնավորապես, խախտվել են ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ, 190-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 23-րդ, 25-րդ, 107-րդ, 108-րդ, 127-րդ, 216-րդ, 353-րդ, 358-րդ, 360-րդ և 365-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը շարադրել և վերլուծել է սույն գործի փաստական հանգամանքները, այնուհետև եզրակացություն արել առ այն, որ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքն անհիմն և ապօրինի է: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ

դատարանի դատական ակտում շարադրված՝ ամբաստանյալի մեղավորության մասին հետևությունները հիմնված են միայն ենթադրությունների վրա և հաստատված չեն գործին վերաբերող, փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմի հատկանիշների ճիշտ մեկնաբանման կապակցությամբ:

Դրանից ելնելով՝ նախքան բողոքում բարձրացված հարցին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քրեաիրավական վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմը՝ նպատակ ունենալով նշված հանցագործության համար քրեական պատասխանատվության ոլորտում ապահովել օրենքի միատեսակ կիրառություն:

1. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմի հատկանիշները.

8. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դասվում է անդրազգային (տրանսնացիոնալ) բնույթ կրող այնպիսի հանցագործությունների շարքին, ինչպիսիք են ահաբեկչությունը, մարդկանց առևտուրը, թմրաբիզնեսը և այլն: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանրային բարձր վտանգավորությամբ է պայմանավորված դրա դեմ պայքարին նվիրված միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերի առկայությունը: Այսպես՝ միջազգային իրավական համակարգում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում «(լվացում)» հասկացությունը սահմանվել է «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» Միացյալ ազգերի կազմակերպության 1988 թվականի Վիեննայի կոնվենցիայով (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականին: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով Վիեննայի կոնվենցիան նախատեսում է միջազգային-իրավական համալիր միջոցառումների անցկացում և որպես նշված միջոցառումների բաղկացուցիչ մաս միջազգային մակարդակում առաջին անգամ ճանաչում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը: Վիեննայի կոնվենցիան մասնակից պետություններին պարտավորեցնում է իրենց օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն սահմանել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը միջազգային իրավական համակարգում իր զարգացումն է ստացել Եվրախորհրդի 1990 թվականի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազդավման և բռնագրավման մասին» Ստրասբուրգի կոնվենցիայում (այսուհետ՝ Ստրասբուրգի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2003 թվականին: Ստրասբուրգի կոնվենցիան առաջին միջազգային-

իրավական փաստաթուղթն է, որն ամբողջությամբ նվիրված է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարին: Ստրասբուրգի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ներպետական մակարդակում քրեաիրավական միջոցներ ձեռնարկել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի, ինչպես նաև քրեական գործերի քննության ընթացքում միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ: Վիեննայի և Ստրասբուրգի կոնվենցիաները պետությունների համար անկյունաքար են հանդիսացել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի բնագավառում ներպետական օրենսդրությունները մշակելու համար: 1989 թվականին Փարիզում հիմնադրվել է «Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը» (այսուհետ՝ ՖԱԹՖ), որն ի սկզբանե նպատակ է հետապնդել համակարգելու փողերի լվացման ուղղությամբ միջազգային գործունեությունը: ՖԱԹՖ-ի կողմից տարբեր տարիների ընթացքում մշակված հանձնարարականները Եվրախորհրդի անդամ պետությունների համար նախատեսում են քրեական արդարադատության ոլորտի և իրավական կարգավորման համակարգի միջոցառումներ, որոնցով պետք է հակազդել փողերի լվացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը: Հանձնարարականները ներառում են նաև միջազգային համագործակցության և կանխարգելման միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև այլ կազմակերպությունների և անձանց կողմից: ՖԱԹՖ-ի հանձնարարականները լայն տարածում են գտել՝ վերածվելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համաշխարհային չափանիշների: Միացյալ ազգերի կազմակերպության կողմից 2000 թվականին ընդունվել է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Պալերմոյի կոնվենցիան (այսուհետ՝ Պալերմոյի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2003 թվականին: Պալերմոյի կոնվենցիան, մասնակից պետությունների պարտավորեցնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դիտարկել որպես հանցագործություն, միաժամանակ որպես նախորդող հանցակազմ առաջարկում է դիտարկել բոլոր ծանր հանցագործությունները: Պալերմոյի կոնվենցիան անդրադառնում է նաև դատական համագործակցության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավման հարցերին: Եվրոպայի խորհրդի կողմից 2005 թվականին ընդունվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազդարվման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Վարշավայի կոնվենցիան (այսուհետ՝ Վարշավայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008 թվականին: Վարշավայի կոնվենցիան, ըստ էության, Ստրասբուրգի կոնվենցիայի կատարելագործված խմբագրությունն է: Այն Ստրասբուրգի կոնվենցիայի առումով ավելի է զարգացնում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի քրեաիրավական կանխարգելիչ միջոցները: Վարշավայի կոնվենցիան կարգավորում է ահաբեկչության ֆինանսավորման, ներպետական մակարդակում ձեռնարկվող միջոցառումների, միջազգային համագործակցության, մոնիտորինգի մեխանիզմների, վեճերի լուծման հետ կապված հարցեր: ՀՀ տարածքում փողերի լվացմանը հակազդելու իրավական կառուցակարգերի սահմանման նպատակով 2008 թվականի մայիսի 26-ին ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը: 9. ՀՀ օրենսդրության մեջ փողերի լվացման հասկացությունը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածում, որի համաձայն՝

«1. [Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումն է] [հ]անցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) (...):

5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված գույք է հանդիսանում ցանկացած գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտներ, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել են սույն օրենսգրքի 104-րդ, 112-113-րդ, 117-րդ, 122-րդ, 131-134-րդ, 166-րդ, 168-րդ, 175-224-րդ, 233-235-րդ, 238-րդ, 261-270-րդ, 281-րդ, 284-րդ, 286-289-րդ, 291-292-րդ, 295-րդ, 297-298-րդ, 308-313-րդ, 329-րդ, 352-րդ, 375-րդ, 383-րդ, 388-րդ և 389-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:

Քննարկվող հանցագործությունը դասվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, ուստի նշված քրեաիրավական արգելքի հիմնական նպատակն է հանցավոր ճանապարհով ստացված դրամական միջոցների կամ այլ գույքի չվերահսկվող շրջանառությունից պաշտպանել պետության տնտեսական համակարգը, ինչպես նաև պայքարել ոչ օրինաչափ եղանակով դրամական միջոցների (գույքի) ձեռքբերմանն ու դրանց օրինական (լեգալ) տեսք հաղորդելուն ուղղված հանցագործությունների դեմ:

10. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման տեսակային օբյեկտն է բնականոն տնտեսական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համակցությունը: Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտն է օրինական գույքային և դրամավարկային շրջանառության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Քննարկվող հանցագործության լրացուցիչ օբյեկտները բազմատեսակ են: Այդպիսիք կարող են լինել հասարակական անվտանգության շահերը (եթե հանցավոր եկամուտների օրինականացումը կապված է կազմակերպված հանցավոր խմբավորումների գործունեության հետ), բնակչության առողջությունը (եթե հանցագործության առարկա են զենքը, թմրանյութերը և այլն), պետական ծառայության շահերի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները (եթե առկա է պաշտոնեական դիրքի օգտագործում) և այլն:

11. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում հանցագործության առարկա կարող են լինել դրամական միջոցները, արժեթղթերը, ցանկացած գույք կամ գույքային իրավունք, որը ձեռք է բերվել ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է գույքի ստացման եղանակը՝ հանցավոր ճանապարհով, այսինքն՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման արդյունքում: Ընդ որում, հոդվածի 5-րդ մասը սպառիչ թվարկում է այն

հանցագործությունները, որոնց կատարման արդյունքում ձեռք բերված գույքը կամ գույքային իրավունքը կարող է հանդիսանալ փողերի լվացման հանցակազմի առարկա:

Հետևաբար, արարքը կարող է որակվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված հանցագործություններից որևէ մեկի առկայության դեպքում: Ընդ որում, վերջինս պետք է ժամանակային առումով նախորդի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը, և դրա արդյունքում ձեռք բերված գույքը պետք է հանդիսանա նշված հանցակազմի առարկա: Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի գոյությունը, ուստի նմանատիպ գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ տվյալ դեպքում պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող հանցագործության հետ: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը:

12. «Գույքի բռնագրավումը» վերտառությունը կրող ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտության կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված օրենսդրական կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկա հանդիսացող գույքը, ինչպես նաև այդ գույքի օգտագործումից ստացված օգուտները ենթակա են բռնագրավման՝ անկախ այն հանգամանքից, թե ում սեփականությունն են հանդիսանում կամ ում կողմից են տիրապետվում:

14. Քննարկվող հանցակազմն ունի բարդ և այլընտրանքային օբյեկտիվ կողմ: Արարքը որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում որակելու հիմքում ընկած է այն նախապայմանը, որ գույքի և գույքային իրավունքների հետ կապված գործողությունները կատարվում են՝ գիտակցելով դրանց՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքը և հետապնդելով հատուկ նպատակ՝ թաքցնել կամ քողարկել գույքի (գույքային իրավունքի) հանցավոր ծագումը կամ օժանդակել հանցակցին խուսափելու իրավական հետևանքներից:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից հետևում է, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ գործողություններով.

ա) հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկում (կոնվերտացում) կամ փոխանցում (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից,

բ) գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնել կամ խեղաթյուրել (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),

գ) գույք ձեռք բերել կամ տիրապետել կամ օգտագործել կամ տնօրինել (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Փողերի լվացման հանցակազմը ձևական է, այն ավարտված է համարվում վերը նշված գործողություններից որևէ մեկի կատարման պահից:

15. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինակացման համար պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմը գնահատելով՝ ՎՃռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա ոչ հստակ ձևակերպումը որոշ դեպքերում կարող է դժվարություններ առաջացնել հանցակազմի կիրառման, ինչպես նաև հարակից հանցակազմերից սահմանազատման առումով:

Խոսքը մասնավորապես վերաբերում է հետևյալ ձևակերպմանը.

«(...) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)», որի տառացի մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ եթե անձը հանցագործության արդյունքում ստացված միջոցները ձեռք է բերում և օգտագործում է իր անձնական կարիքները բավարարելու համար, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի վերոնշյալ պայմանի ուժով մեխանիկորեն դառնում է քննարկվող հանցագործության սուբյեկտ: Նման մոտեցումը չի համապատասխանում գույքի օրինականացման էությանը, քանի որ տվյալ պարագայում բացակայում է այն «լվանալուն» ուղղված դիտավորությունը: Այլ կերպ՝ անձը դիտավորություն չի ունեցել օրինական շրջանառության մեջ դնել հանցավոր ճանապարհով ստացված միջոցները, այլ ընդամենը ցանկացել է օգտվել դրանցից, քանի որ ի վերջո հանցագործությունը կատարվել է հենց այդ միջոցները ձեռք բերելու և դրանցից օգտվելու նպատակով:

Այս դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիան օբյեկտիվ կողմից կարող է համընկնել հանցագործության օժանդակության հետ, եթե գույքի ձեռքբերումը եղել է նախապես խոստացված, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի դիսպոզիցիայի հետ, եթե գույքի ձեռքբերումը նախապես խոստացված չի եղել:

Մինչդեռ տվյալ դեպքում անձը հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքի հետ կապված բոլոր գործողությունները կատարում է մեկ դիտավորությամբ, այն է՝ համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրը քողարկել կամ խեղաթյուրել և դրանց հաղորդել օրինական տեսք:

16. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված հիմնավորումները՝ ՎՃռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում լիարժեք հստակեցված չէ այս հանցագործության սուբյեկտիվ կողմի զլխավոր, էական հատկանիշը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նկարագրված գործողությունների արդյունքում համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրի քողարկման կամ խեղաթյուրման նպատակը:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի գործնական կիրառումը պետք է կառուցվի այն եզրահանգման վրա, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն իրենում պարունակում է հատուկ նպատակ՝ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները քողարկել, թաքցնել և այդ միջոցներն օրինական շրջանառության մեջ ներգրավել: Այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է այս հանցագործության հանցակազմի առկայությունը:

17. Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն իր կողմից օրինականացնելու փաստը և ցանկանում է դա:

Փողերի լվացման սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ այլ գույքի հետ ֆինանսական կամ այլ գործարքներ է կատարում կամ տվյալ նյութական արժեքները օգտագործում է ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության համար (ընդհանուր սուբյեկտ): Որպես նշված հանցակազմի հատուկ սուբյեկտ կարող է հանդես գալ միայն պաշտոնատար անձը (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ):

II. Առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու և նշված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն օրինականացնելու մեջ ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղավորության հաստատված լինելը.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքների կատարման մեջ ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղավորությունը հաստատված է արդյոք գործին վերաբերող, փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

19. Վճռաբեկ դատարանը, ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Ա.Սարգսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքներում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են վկաներ Ա.Պողոսյանի, Ա.Օկիշորի, Հ.Կտիկյանի, Դ.Սերոբյանի ցուցմունքներով, «Իրեղեն ապացույց ճանաչելու մասին» և «Այլ փաստաթղթերն ապացույց ճանաչելու և քրեական գործին կցելու մասին» նախաքննության մարմնի 2009 թվականի մայիսի 7-ի որոշումներով ապացույց ճանաչված և սույն գործով դատական ակտերում շարադրված փաստաթղթերով, դատահաշվապահական փորձաքննությունների թիվ 09-0361 և թիվ 09-0779 եզրակացություններով:

20. Վերը նշված ապացույցներն իրենց համակցության մեջ բավարար են հաստատված համարելու, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը քննությամբ չապարզված անձանցից ձեռք բերված

բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների գործածմամբ, իրեն պատկանող՝ բջջային հեռախոսների մանրածախ առևտրի վաճառատարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար: Այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

Բացի այդ, քրեական գործում առկա ապացույցներով հաստատված է, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը գողացված գումարը փոխանցել է «Եյթիեյ մորայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված հաշվեհամարին՝ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառատարահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 ՀՀ դրամի գողոնի իրական բնույթը, ծագման աղբյուրը և նշված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներին հաղորդելով օրինական տեսք:

Վերը նշված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 8-17-րդ կետերում առկա իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում նաև այն, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

21. Այսպիսով, առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու և նշված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն օրինականացնելու մեջ ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ առումով Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին դատարանի հետևությունները հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և ամբաստանյալին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար հիմք չեն կարող հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

22. Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական

| | |
|---|--|
| | <p>դիրքորոշումները: 2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:</p> <p>Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ Ս.ՕՀԱՆՅԱՆ</p> |
| Դատական ակտի ամսաթիվը: | 24-02-2011 |
| Ամսաթիվ: | 04-05-2011 |
| Այլ նշումներ: | |
| Գործի առաքման ամսաթիվ: | 06-05-2011 |
| Դատարան: | Կենտրոն և Նորք-Մարաշ |
| Այլ նշումներ: | 4 հատոր՝ 241,260,163,301 թերթ, 1 անձնագիր |
| Ամսաթիվ: | 03-08-2011 |
| Բողոք բերող անձ | |
| Անուն | Ա |
| Ազգանուն | Բարոյան |
| Հասցե | տուժող «Ինելկրանկ» ՓԲԸ գործադիր տնօրենի ժ/պ Ա.Բարոյան-ք.Երեվան, Թումանյան 17 |
| Այլ | ամբաստանյալ՝ Արսեն Հայկի Սարգսյան |
| Հավատարմագրված փաստաթան | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Պետական տուրք: | 0 |
| Պատասխանի ստացման ամսաթիվը: | |
| Պատասխան բերող անձը | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Բողոքարկվող դատական ակտը: | |
| Գործի համար: | ԵԿԴ/0090/01/09 |
| Ում կողմից է բերվել բողոքը: | Տուժողի ներկայացուցիչ |
| Գործի առաքման ամսաթիվը: | 05-08-2011 |
| Գրության համարը: | Ե-21150 |
| Գործի ստացման ամսաթիվը: | 09-08-2011 |
| Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/: | 4 հատոր |
| Դատապարտյալ | |

| | |
|--|--|
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Գործի համարը: | |
| Գործը ստացվել է: | Կենտրոն և Նորք-Մարաշ |
| Գործը ստացվել է: | |
| Գործը ստացվել է: | |
| Պատասխանատվության ենթարկվածների թիվը: | 1 |
| | |
| Ամսաթիվ: | 09-08-2011 |
| Նախագահող դատավոր | |
| Դատարանի անվանում: | Վճռաբեկ |
| Դատավորի անուն: | Դավիթ Զաքարի Ավետիսյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Վճռաբեկ |
| Դատավորի անուն: | Սամվել Վլադիմիրի Օհանյան |
| Այլ նշումներ: | |
| | |
| Ամսաթիվ: | 07-09-2011 |
| Որոշման առաքման ամսաթիվը: | 07-09-2011 |
| | |
| Ամսաթիվ: | 07-09-2011 |
| Որոշումը: | ԵԿԴ/0090/01/09 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 7 սեպտեմբերի 2011 թվական ք.Երևան ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/ նախագահությամբ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ քննարկելով Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռի և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ տուժող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ դիմումը Պ Ա Ր Զ Ե Ց |

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռով Արսեն Հայկի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Էյթիեյ մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Ա.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ին կայացրել է թիվ ՍԴՈ-983 որոշումը, համաձայն որի՝ "ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի/օրինական տիրապետողի/ գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր": Գործով տուժող՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունը հիմնվելով ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման վրա 2011 թվականի օգոստոսի 3-ին վճռաբեկ բողոք է բերել՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու խնդրանքով:

2011 թվականի օգոստոսի 26-ին Վճռաբեկ դատարանը ստացել է տուժողի դիմումը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով դատական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, քանի որ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից իրականացվում են կատարողական գործողություններ:

Վճռաբեկ դատարանը, գտնելով, որ «Ինեկոբանկ» ՓԲ վճռաբեկ բողոքը համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության

| | |
|--|--|
| | <p>օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջին, 2011 թվականի սեպտեմբերի 7-ին որոշում է կայացրել բողոքը վարույթ ընդունելու մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը»: Քանի որ Վճռաբեկ դատարանի վարույթում գտնվող բողոքը վերաբերում է «Ինեկոբանկ» ՓԲ Ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարը բռնագրավելու իրավաչափությանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով բողոքարկված դատական ակտերի կատարումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա պետք է կասեցնել: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը</p> <p>Ո Ր Ո Շ Ե Ց Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման կատարումը՝ «Ինեկոբանկ» ՓԲ Ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով, կասեցնել մինչև Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի վերանայման արդյունքում որոշում կայացնելը: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:</p> <p>Նախագահող՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Դատավորներ՝ Ս.ՕՂԱՆՅԱՆ Ե.ԴԱՆԻՇԵՅԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ</p> |
| Որոշումը առաքվել է: | 07-09-2011 |
| Ում: | «Ինեկոբանկ», ՀՀ գլխավոր դատախազություն |
| Այլ նշումներ: | |
| Երբ: | 20-10-2011 |
| Ուղարկվել է ծանուցագիր: | 14-10-2011 |
| Ժամ: | 11:00 |
| Այլ նշումներ: | |
| Նխտերի դահլիճի համարը: | 2 |
| Ամսաթիվ: | 20-10-2011 |
| Ստորադաս դատարանի դատական ակտը բեկանվել է: | Բեկանվել է և գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության |
| Ամսաթիվ: | 20-10-2011 |
| Հոդված | |
| Հոդված | 403-406, 419, 422-424 |
| Այլ նշումներ: | |
| Դատական ակտ: | ԵԿԴ/0090/01/09 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵԿԴ/0090/01/09
Նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
Դատավորներ՝ Ա.Դանիելյան
Մ.Արղամանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին Երևան քաղաքում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Հայկի
Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի
3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ
վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ
դատարան) 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժող՝
«Ինեկոբանկ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի փետրվարի 2-ին:
Նախաքննության մարմնի 2009 թվականի փետրվարի 12-ի
որոշմամբ Ա.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան
մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին,
2-րդ կետերով և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:
2009 թվականի մայիսի 7-ին Ա.Սարգսյանին առաջադրված
մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է
առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի
1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:
2009 թվականի մայիսի 21-ին քրեական գործը մեղադրական
եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-
Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին
ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):
2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի
դատավճռով Արսեն Հայկի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ
քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-
րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է
ազատազրկման 5 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին

համարժեք գույքի բռնագրավմամբ, 190-րդ հողվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատագրված 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այն տարածելով նաև «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում «Էյթիեյ մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Ա.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրվում 9 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այն տարածելով նաև «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

3. Տուժողի և ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, իսկ Առաջին աստիճանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժողի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ վերադարձվել է՝ բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ, իսկ ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը մասնակի ճանաչել է հակասահմանադրական և անվավեր: Գործով տուժողը՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունը, հիմնվելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-983 որոշման վրա, 2011 թվականի օգոստոսի 3-ին վճռաբեկ բողոք է բերել՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու խնդրանքով:

2011 թվականի օգոստոսի 26-ին Վճռաբեկ դատարանը ստացել է տուժողի դիմումը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով դատական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, քանի որ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից իրականացվում են կատարողական գործողություններ:

Վճռաբեկ դատարանը, գտնելով, որ «Ինեկոբանկ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջին, 2011 թվականի սեպտեմբերի 7-ին որոշում է կայացրել բողոքը

վարույթ ընդունելու մասին:

Նույն օրը Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել «Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման կատարումը՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով, կասեցնել մինչև Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի վերանայման արդյունքում որոշում կայացնելը»:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները

5. Ա.Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության միակ հիմնադիր և Երևանի Թումանյան 27 հասցեում գտնվող «Գլոբալ մոբայլ» վաճառատնահում իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր՝ միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված Pos-տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում նշված սարքը «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության միջև 2008 թվականի հունիսի 23-ին կնքված պայմանագրի համաձայն տեղադրվել է վաճառատնահում: Այնուհետև Ա.Սարգսյանը քննությամբ չպարզված անձանցից ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում այդ քարտերը գործածելով նշված POS-տերմինալում 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարին՝ միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառատնահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթուրելով 17.163.000 ՀՀ դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այսինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափի հանցավոր ձանձապարհով ստացված եկամուտները: Նշված գումարի մի մասը Ա.Սարգսյանը ելքագրել է «Էյթիէյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարից և տնօրինել իր հայեցողությամբ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ առկա է դատական ակտը վերանայելու հիմք հանդիսացող նոր հանգամանք, այն է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-983 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը՝ չեղյալ համարելով «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

8. Սույն գործը վարույթ է ընդունվել այն հիմքով, որ առկա է նոր հանգամանք՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում:

9. ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշման եզրափակիչ մասում սահմանել է. «ՀՀ քրեական

օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր»:

10. ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշումը սույն գործով նոր հանգամանք է, քանի որ կիրառվել է ՍԴՈ-983 որոշման եզրակակիչ մասում մասնակի հակասահմանադրական ճանաչված իրավանորմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, իսկ սույն բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան պահանջների պահպանմամբ:

11. Հաստատելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-983 որոշումը սույն գործով նոր հանգամանք է՝ Վճռաբեկ դատարանը քննության է առնում հետևյալ հարցը. ՍԴՈ-983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հակասահմանադրական ճանաչումն ըստ էության ազդու՞մ է արդյոք սույն գործի ելքի վրա, ուստի հի՞մք է արդյոք սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի բեկանման համար, թե դա ըստ էության չի ազդում սույն գործի ելքի վրա:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արսեն Հայկի Սարգսյանը վերականգնել է տուժող՝ «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությանը պատճառված վնասը, սակայն Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով որոշել է բռնագրավումը տարածել նաև Ա.Սարգսյանի միջոցով «Եյթիեյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-983 որոշման լույսի ներքո գնահատելով բողոքարկված դատական ակտի իրավաչափության հարցը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ տուժողի օրինական շահերին վերաբերող հարցի՝ տուժողին վճարված 6.585.294 ՀՀ դրամի իրավական ձակատագրի հարցի լուծումը բացառապես պայմանավորված է եղել ՍԴՈ-983 որոշմամբ՝ վերաբերելի մասով հակասահմանադրական ճանաչված ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ: Մասնավորապես, սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման արդյունքում չի երաշխավորվել տուժող «Ինեկորբանկ» ՓԲ ընկերության գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանությունը:

12. Հիմք ընդունելով սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման՝ «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը պետք է բեկանել և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

| | |
|------------------------------------|--|
| | <p>1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերանայել ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը: Դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման՝ «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը բեկանել և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:</p> <p>2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:</p> <p>Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ</p> |
| Դատական ակտի ամսաթիվը: | 20-10-2011 |
| Ամսաթիվ: | 26-12-2011 |
| Այլ նշումներ: | |
| Գործի առաքման ամսաթիվ: | 28-12-2011 |
| Դատարան: | Քրեական և զինվորական վերաք. |
| Այլ նշումներ: | 4 հատոր՝ 241, 260, 163, 369 թերթ: |
| Ամսաթիվ: | 08-05-2012 |
| Բողոք բերող անձ | |
| Անուն | Կրոմվել |
| Ազգանուն | Գրիգորյան |
| Հասցե | ք.Երևան, Տիգրան Մեծի 45/25 |
| Այլ | ամբաստանյալ՝ Արսեն Հայկի Սարգսյան |
| Հավատարմագրված փաստաբան | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Պետական տուրք: | 0 |
| Պատասխանի ստացման ամսաթիվը: | |
| Պատասխան բերող անձը | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Բողոքարկվող դատական ակտը: | ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 14.10.2010թ. որոշման դեմ /նոր հանգամանքի հիմքով/ |
| Գործի համար: | ԵԿԴ/0090/01/09 |
| Ում կողմից է բերվել բողոքը: | Ամբաստանյալի պաշտպան |
| Գործի առաքման ամսաթիվը: | 15-05-2012 |

| | |
|--|---|
| Գրության համարը: | Ե-12660 |
| Գործի ստացման ամսաթիվը: | 18-05-2012 |
| Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/: | 5 հատոր |
| Դատապարտյալ | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Գործի համարը: | ԵԿԴ/0090/01/09 |
| Գործը ստացվել է: | Կենտրոն և Նորք-Մարաշ |
| Գործը ստացվել է: | |
| Գործը ստացվել է: | |
| Պատասխանատվության ենթարկվածների թիվը: | 1 |
| Ամսաթիվ: 18-05-2012 | |
| Նախագահող դատավոր | |
| Դատարանի անվանում: | Վճռաբեկ |
| Դատավորի անուն: | Դավիթ Զաքարի Ավետիսյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Վճռաբեկ |
| Դատավորի անուն: | Արթուր Վլադիմիրի Պողոսյան |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: 18-06-2012 | |
| Որոշման բովանդակությունը: | <p>ԵԿԴ/0090/01/09</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>18 հունիսի 2012 թվական ք.Երևան</p> <p>ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),</p> <p>նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ</p> <p>քննարկելով Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի</p> |

վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով Արսեն Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման 9 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի կողմից որպես վնասի հատուցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Պաշտպանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2011 թվականի փետրվարի 24-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, ամբաստանյալ Ա.Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: 2011 թվականի օգոստոսի 3-ին սույն գործով տուժող «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-983 որոշումը վկայակոչելով որպես նոր հանգամանք:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ տուժողի վճռաբեկ բողոքը բավարարվել է: Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը վերանայվել է: Ղատապարտյալ Ա.Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավման մասը բեկանվել է և գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Նոր քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մարտի 7-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը՝ «Էյթիեյ մոբայլ» ՍՊԸ-ի կողմից որպես վնասի հատուցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին վճարված 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավման մասով բեկանվել և փոփոխվել է: «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին որպես վնասի հատուցում վճարված 6.585.294 ՀՀ դրամի բռնագրավումը վերացվել է և այն թողնվել է վերջինիս տնօրինությանը:

2012 թվականի մայիսի 8-ին վճռաբեկ բողոք է բերել ղատապարտյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը՝ խնդրելով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ: Բողոք բերած անձը փաստարկել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքը, այն է՝ առկա է նոր հանգամանք: Որպես նոր հանգամանք բողոքաբերը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-983 որոշումը: Վերլուծելով բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի հիշատակված որոշումը դատապարտյալ Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը վերանայելու և այն մեղմացման առումով փոփոխելու համար հանդիսանում է նոր հանգամանք: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման: Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը վերադարձնել: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
 Դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
 Հ.ԱՍԱՏՐՅԱՆ
 Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ
 Ս.ՕՀԱՆՅԱՆ

| | |
|-------------------------------|--|
| Ամսաթիվ: | 26-06-2012 |
| Այլ նշումներ: | |
| Գործի առաջման ամսաթիվ: | 28-06-2012 |
| Դատարան: | Կենտրոն և Նորք-Մարաշ |
| Այլ նշումներ: | 5 հատոր՝ 241, 259, 163, 369, 130 թերթ: |